

ՄԱՏԵՆԱՀԱՐ “ՄԱՍԻՍ”, ԲԻՒ 7

ԱԹ. ՔՈՍԹՈՎ

ԳՈՒՇԱԿԸ

(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ)

(Վեպի վերածուած մասնաւորաբար “Մեղուշի համար”)



1934

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ - ՄԱՍԻՍ,
ՍՈՅԱՏՈ.

891-81

L - 84

30 JUL 2010

891.81

Ք-84

19 NOV 2010

ՄԱՏԵՆԱՇԱՐ “ՄԱՍԻՍ”, ԹԻՒ 7

ԱԹ. ՔՈՍԹՈՎ

ԳՈՒՇԱԿԵԼ

(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ)

(Վեպի վերածուած մասնաւորաբար “Մեղու»ի համար)



1934
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ “ՄԱՍԻՍ”
ԱՌԵՎԻՍ,

30 JUL 2013

15912

— Պրէ՛, մըմոաց տանտիրուհի Փէնան թեզանիքովը քիթը սրբելէն ու տուն մտնելէն, մեր մարդը նորէն քաղաքը ծախած ըլլալու է, օրը իրիկուն կ'ըլլայ ու դեռ չեկաւ...

Յուլիսի տաք արեւ մը հինա քսեր էր գիւղապետ Տանքօ Կալանովին բակը: Հին, պարզուկ միայարկ տուն մըն էր իրը, զոր իրեն ձգեր էր ակոսալիկ իր հայրը՝ իր օրերուն հետ: Մութնուլուսուն, Աստուծուն օրը, երեք ձայն կը լսէին գիւղացիք— Պայի Փէթրոյին աքաղաղին կանչը, Ժամկոչին հազն ու դրան մը ձոփնչը, Դուռ ըսածս՝ «հին հին դարուց» մնացած հասակեկ բան մըն էր, որուն երկու քովերը երկու լուսամուտներ բաց թողեր էին: Զախին կար աւելի փոքր դուռ մը իսկ երկու դռներուն միջեւ հնամենի նստարան մը: Առաստաղէն կախուած էին ձողեր, ու անոնց վրայ ինչե՛ր ըսես չկար՝— կարմիր, կարմիր պըղպեղ, արցակներով սոխ ու սխտոր: Ու տանը ձակտին՝ պայտ մը որ ժանդ կապեր էր և որ բախտ բանալու տեղ քանի մը հեղ... ծակ բացեր էր գիւղապետ Տանքոյի ճակտին վրայ:

Զըլլալիք բան չէ, մարդ ես, կանուխկեկ ժողվըւիմ՝ տուն երթամ կ'ըսես, բայց դուն քուտէրդ չես որ: Մանաւանդ հը՛, երբ գիւղապետ ես:

— Հատ մը, Պայի Տանքօ՛... Պայի Տանքօ՛, մեր սեղաննէն ալ...

է՛ն, մարդ եղիր ու դիմացիր, Ու կ'իյնասներս: Մէկ, երկու, երեք... մնացածը չես կրնար համբել արդէն, մինչեւ որ տուն շտկուիս՝ պատերը բռնել աշխատելէն ու, դռնեն մտած ատենդ պայտը գիւղապետի գլուխդ շփոթէ իշուն ոտքին հետ... Այսօր, լուս աչքով պիտի դար, սակայն,

2901-2010

Խրիսթօն ուր խելք պիտի ընէ ասանկ բաները:
— Ե՞ն Մանչօն ուրիշ է, խոստովանեցաւ Ցվէթան:

— Ես ալ ատո՛ր համար կը հաւանիմ իրեն:
— Իսկ ա՞ն:
— Երբեմն անկ հաւանելու պէս կը նայի:
— Բան մը ըսած չէ՞ այդ մասին:
— Ո՞չ, Խրիստոն ալ բան մը ըսած չէ ինձի...

Երկուքն ալ միայն կը նային...
— Մեր գիւղի աղաքն ըսես— դժգոհեցաւ Ցվէթա— աչքերնին աղջիկ մը խածածու կը դպին, կը քսութաին, նեղ տեղեր՝ կը սղմուեն...

— Զգէ՛ սըւոնք... մէկը առ միւսին զարկ...
իրարմէ կոշտ են— վրդովուեցաւ Պոսիլքէն:
— Ե՞ն, Մանչօն և Խրիսթօն ուրիշ են... աւելի զարդացած են ու միայն կը նային, անանկ չէ՞...
— Հա՛, — ձայնակցեցաւ Պոսիլքէն՝ բոպէական հրճուանք մը աչքերուն մէջ — շնորհք կայ վրանին:
Ե՞ն, մեր տղոցմէն մէկը փորձէ դպիլ կամ խօսք նետել — զայրացաւ կրկին — անանկ սուռար մը կ'ընեմ որ մուկ կը դառնայ...

— Ինձի նայէ, Պոսիլքէ, — ընդմիջեց Ցվէթան — կ'երեւայ դուն դեռ բարի ծաղիկի մը չե՛ս հանդիպեր... անանկ հանած վարածներ կան որ ձիու ճանձի նման կը փակին... Քիթ-բերան կ'ընես, ձեռքին կը զարնես, կը սպանաս պոռալ թէեւ...

— Թող մէկը փորձէ՝ տեսնեմ — բացաւ աչքերը Պոսիլքէ — աչքը կը հանեմ խաչ վկայ...

Յետոյ, բոպէ մը լոելէ վերջ, անակնկալ մը տածումէ մը մզուած

— Գիտեմ — աւելցուց — Մերոնք Մանչոյին տալիք չեն զիս... ատոր համար ալ խօսք չեմ բա-

նար մօրս...: Եւ հազիւ «մօրս» բառը արտասաներ էր, երբ հօրը հազին ձայնը առաւ:

Պայի Տանքօն ըսես, ի՞նչ հախը ուտեմ, գիւղապետի չէ նախարա՞րի հազ կը հազա՞յ մարդը... Անանկ որ եօթը փողոց անդին կնիկները լաչակնին ու գէշերնին կը շտկեն, իսկ Ցվէթան ու Պոսիլքէն շունչերնին բռնած՝ կծկուեր են ցանկապատին երկու կողմերը:

Ու երբ հազն ու ոտնաձայները մօտեցան, Պոսիլքէ ծոեցաւ, աւլել ձեւացուց, աչքին ծարիկովը նոյեցաւ բակի դրանը և,

— Հայրս ու տէր Մթայքօն է, ըսաւ:
Արդէն մաեր էին ներս, անշուշտ տէրտէրը առջեւէն ու հազիւ ոտքը դրած բակի սեմին՝ «ողջո՛յն, օ՛րհնած»ը արտասանելէն...

— Օրհնեցէ՛ք տէր հայր, — պատասխանեց Փէնա՝ բուրդն ու սանարը մէկ կողմ դնելով ու իրար անցնելով:

— Բո՞ւրդ կը սանտրես, ի՞նչ կ'ընես:
— Ե՛, հոս հոն մնացած բուրդերը մողկեցի— շարունակեց Փէնան՝ ոտքի ելլելով և ձեռք տալով տէր հօրը — սանարեմ ըսի: Քաղաք տանելիք բան չէր որ տանէի:

— Նստէ նայինք, տէրտէր — մէջ ինկաւ գիւղապետը՝ ձայնով մը որ կը մատնէր թէ դժոնի է բուրդի մանածի անպէտ խօսակցութենէն — սանկ՝ տունիդ պէս, հասկցա՞ր... հանէ փակեղդ ալ... հա՛, սանանկ...

Նստաւ և ինք: Հանեց ծխատուփը գօտիէն, առաւ հատ մը երկարեց տէր հօրը ու, կնոջը ուղղելով խօսքը.

— Տէրտէրը բերի քի, — շարունակեց — սայր նոր օղիին համը նայինք... Պոսիլքէ...

— Համմէ՛, հայրիկ, — վագելէն մօտեցաւ
Պոսիլքէ և, իբրեւ թէ նոր կը նշմարէր տէր հայ-
րը — բարի ես եկեր, տէր հայր, — ըստ՝ աջը առ-
նելով անոր:

— Բարի՛ տեսանք, Պոսիլքէ — պատասխանեց
տէր հայրը՝ քիչ մը երկար պահելով դեռատի աղ-
ջկան տաք ու փափուկ ձեռքը իր ձեռքին մէջ, և
ձայնին տալով մեծի ու հսդածուի շեշտ մը որուն
տակ, սակայն, խօսքը մէջերնիս, «ուտե՛մ քեզ,
անուշիկս»ի անմեղ մեղք մը կար կարծես...»

Եւ նոյն ցանկութենէն մղուած, ուզեց քիչ մը
երկարել այդ պահը...»

— Կ'աւլե՞ս, ի՞նչ կ'ընես, հարցուց:

— Ի՞նչ ընէ — մէջ ինկաւ մայրը — սիրտին
նեղութենէն մէկ աւլածը մէյ մըն ալ կ'աւլէ:

— Շատ աղէկ կ'ընէ — չեշտը վոխեց տէրտէրը —
ծալլուել նստիլը լաւ չէ... բանուկ ձեռքը չի մուրար,
կ'ըսէն ծերերը:

— «Ծերերը» մի՛ — մէջ ինկաւ այս անդամ
գիւղապետը՝ սիկառին մուխը փշելէն — ինքղինքդ
կենցի՞ տեղ կը դնես, ի՞նչ է՝ տէրտէ՛ր...

— Հարկաւ, — ոտքի ելաւ տէրտէրը՝ քայլ մը
աւելի մօտենալով Պոսիլքէին — ծե՞ր կարծեցիր զիս,
դրացի՛: Մեր երէցկինն ալ ատ խելքէն է. ծեր
ես աէ, ծեր ես... ո՞ւրկէ ուր գլուխը մտեր է թէ
ես ծեր եմ... անդամ մը գլուխը բան մը մտա՞ւ՝ կա-
զեօղի խցիկի պէս չես կրնար հանել... Քա երէցկին,
կ'ըսէմ, ինչէ՞ն հասկցար էի ծերացած եմ, — մօրու-
քիդ նայէ, ա՛յ մարդ, կը պատասխանէ... Անանկ
է ետ, ալ ուրիշ գործ չունիմ՝ Աստուծուն օրը մօ-
րուքիս թելերը պիտի դիտեմ... Աստուածային
ի՞նչ գեղեցկութիւններ կան դիտելիք — վերջացուց՝
ակնարկը տալով Պոսիլքէին և ի խորոց սրտի շունչ
մը առնելով...

— Աստուածդ սիրես, տէրտէր, — վրայ բերաւ
Փէնան — դիտելիք ի՞նչ գեղեցկութիւն մնացեք է...»

— Վա՛յ, Փէնա՛, դո՞ւն ալ... հեղ մը սա ճա-
հիլներուն հարցուր, նայինք... հը... ի՞նչ կ'ը-
սես, Պոսիլքէ...»

— Անո՞նք... հա՛, անոնք ամէն բան գիտեն,
— հեգնեց Փէնա:

— Վրաս գրէ ճահիլներուն գիտածը, — ճայ-
նը բարձրացուց գիւղապետը՝ կարծես ալ անհամբեր
— աղջի՛կս, բեր, տեսնենք, աման մը օղի՝ տէր
պապային հետ համը նայինք սա միւպարեկին...

Պոսիլքէ աճապարեց ներս: Տէր հայրը կրկին
նստաւ, վերստին վառեց իր մարտ սիկառը:

— Ինչո՞ւ ներս չէք երթար, դիտել տուաւ
Փէնան:

— Բակը աւելի լաւ է — պատասխանեց ամու-
սինը, — դուն դնա, նայէ գործդ...: Ու կինը մը-
տաւ ներս:

— Դուն սա աղջիկդ, — վերսկսաւ տէր Սթայ-
քօ — դպրոցէն հանելու չէիր, պայի Տանքօ:

— Աղջիկ աղայ է, աէ՛րտէր, երեք տարի բրո-
կիմնազ գնաց, երկու տարի ալ՝ սա կարուձեւի, է-
վել-թափելու վարժարան մը կայ...»

— Սթափանսքօ՛:

— Հա՛, հոդ զրկեցի... էղաւ հինդ տարի...
կ'օգաէ՛ կերթայ... քանի խելքս կորսնցու-
ցած չեմ՝ ես իմ աղջիկս նէ տօքթօր կ'ընեմ, նէ ալ
վարժուհի... մեր ծերութեանը մեզ ո՞վ պիտի նա-
յի... թող հոս մնայ, կ'օգնէ մեզի. օր մըն ալ
Աստուած դրսմէր որ ընէ՝ համով հստով փեսայ մը
կ'առնենք...

— Ու կը պսակե՞նք...

— Է կը պսակես, հիլպէր, դուն չպսակես՝ ո՞վ
պիտի պսակէ... անկէ յետոյ ալ բակը թող ճլւլան

թոռնիկները... Ալ խելքս աղէ՛կ մը տեղ ըրաւ էի
երկու մանչերէս ալ խեր չկայ մեզի: Դի՛րքերը ա-
ռին անոնց խելքերը... թող քառասուն տարի
կարդան... պաշտօնեայ ըլլան, նախարար թող ըլ-
լան... «արիւն ձեր՝ ի գլուխ ձեր» կ'ըսէ Աւետա-
րանը...:

Պասիլքէ կրկին եկաւ բակ՝ երկու փոքրիկ ա-
թառներ բռնած: Թողուց զանոնք հոն ու վերստին
մտաւ տուն:

— Կ'ուզեմ որ Յանքաս ուզածին չափ սորվի,
շարունակեց տէր Սթայքօ:

— Ես ատոր ամին չեմ ըսկը, տէ՛րտէր— պա-
տասխանեց գիւղապետը— կին ըստադէ՛ շատ գիտնա-
լու չի գար: Քիչ մը կարդաւ քիչ մը գրել, քիչ
մըն ալ կարել ու կարկտել գիտնայ կը լմնայ՝ կ'եր-
թայ:

— Մանչու պէս թող կիմնաղիան աւարտէ, —
ոգեւորուեցաւ տէրհայրը, — համալսարան թող յա-
ճախէ: Կրօնական մարդ եմ, ոչ հող ունիմ, ոչ
կալուած, ի՞նչս պիտի ձգեմ իրեն: Թող գոնէ բան
մը սորվի ու ինծի պէս չչարչրկուի ետքը, — ձայնը
բարձրացուց՝ դժգոհանք մը դնելով իր շեշտին մէջ:
Բայց տեսաւ Փենան, որ դոնէն դուրս կ'ելլէր օղին
ձեռքը, մէկէն արամադրուեցաւ մարդը, երերած-
կաց, նայեցաւ հեղ մը Փենային ու հեղ մըն ալ
գիւղապետին, որուն աչքը օղիին էր արդէն, և որ
անմիջապէս կնոջը ձեռքէն օղին առնելով, երկա-
րեց տէրհօր, ու

— Հրամմէ, տէրտէր, — ըստ անհամբեր—
օղինուս համը նայէ...:

Յետոյ, խօսքը ուղղելով իր կնոջ.

— Տէրտէրին ըստածը ըստ'ծ է, — շարունակեց,
հասկար: Ան շատ լաւ կը հասկնայ օղիէն... հը՛,
տէրտէր:

— Փորձենք նայինք, — վրայ բերաւ տէրհայ-
րը՝ օղիին փոքրիկ թակոյկը առնելով.

Տարաւ բերնին, կուլ տուաւ քիչ մը, չփչփա-
ցուց բերանը, յետոյ կրկին կուլ տուաւ, և, ձեռ-
քովը սրբելով շրթները, ըստաւ.

— Ծիտակը ըսելիք չկայ, պատուական օղի է,
դրացի՛ն... ծօ՛, այսքան ատեն է...

— Է՛, քեզի քա՞նի հեղ ըսի, ամմա քիթիդ
չդրիր, տո՛ւր, նայինք.— ձեռքը երկարեց գիւղա-
պետը և տուաւ օղին: Սրբեց թակոյկին բերանը,
տարաւ բերնին, և, գլուխը շարժելէն.

— Օղին ալ եղեր է Տէ՛ եղեր է հա, — ձայնը
բարձրացուց — չխմե՛ս, կնի՛կ, ա՛ռ հելէ...:

— Ես ի՞նչ խմեմ... աղէ՛կ, հատի՛ կենդանու-
թիւնն...

— Անմահութիւն, կնիկ...

— Փո՛ւֆ... բարկ է— թթուեցուց գէմքը Փէ-
նու...

— Բա՞րկ է մի... ամմա ըրիր հա՛— զարմա-
ցաւ գիւղապետը— օղի ըստածը հարկաւ քիչ մը պի-
տի կձէ... ի՞նչ կ'ըսես, տէրտէր:

— Իմս ալ այս տարի լաւ դուրս եկաւ:

— Փառք Աստուծոյ սալորը առատ էր. հերու-
սալորին երեսը չտեսանք որ— ու կրկին բերանը
տարաւ օղին:

— Հա՛, աս տարի սալորն ալ առատ էր, խա-
ղողն ալ... Աստուծոյ որ տայ՝ կու տայ:

— Ու նորէն չի մոռնար մեզ:

— Աստուծ մեղ բնաւ չի մոռնար, Տանքօ՛,
բայց մենք կը մոռնանք զայն...

— Ծիտա՛կ ըսիր տէրտէր, ատեն մը մեր պա-
պերը...

— Հը՛... աշխարհը փոխուեցաւ, Տանքօ՛, հիմա ոչ կրօնքի կը նային, ոչ օրէնքի։ Աստուծոյ անդամ կը հայոյեն... աշխարհը պամպաբա բան մըն է հիմա... մարդիկ ջուր խմելու պէս սուտ կը խօսին, մեծը չեն յարգեր, դատարանին մէջ սուտ երդում կընեն, զիրար կը կողոպտեն, ուրիշին ունեցածին աչք ունին, ու աեսածնին ձեւի կը դընեն.— ուրիշի՞նն է եղեր, օտարի՞նը, պետութեա՞նը՝ բնաւ հոգերնին չէ...»

— Իրաւունք ունիս, տէրտէ՛ր, մոռցանք Աստուծը, մոոցա՞նք։

— Եկեղեցի ուաք կոխող չկայ, զոնէ գան մոմ մը վառեն ու ջուխտ մը աղօթք ըսեն։ Դու՛ւն, օրինակ, եկեղեցի կու գաս կամ պատկի, կամ կնունքի, կամ մեռիլի, անկէ անդին մի հարցներ...»

— Մերը, տէրտէ՛ր, — փորձեց չքմեղանալ Տանքօ — սւրիշ է... էրիկ մարդ ըսածդ՝ քառասուն գործ ու քառասուն տէրտ ունի գլուխը։ Ժամանակ կա՞յ եկեղեցի գալու։

— Կնիկները կարծես աւելի քիչ գործ ունին. մերամ ըսէ դուն, Տանքօ։ Անոնք ալ կ'աշխատին տունն ու արտը, բայց նորին ժամանակ կը գանեն գալու։

— Կնիկները մեր տեղը կ'աղօթեն, ձանը՛մ։

— Կ'աղօթեն, բայց, Աստուծ մեղք չսեպէ՝ եկեղեցին կնիկներու ակումբ դարձեր է... չորս կողմդ կնիկ. եղբա՛յր, մարդիկը ըսես՝ սրճարանները կը լեցուին...»

— Է՛հ, տէրտէր, կարծես դուն սրճարան չես երթար,

— Կ'երթամ, բայց ձեր պատճառով, որպէսզի սա ու նա գանեմ, խօսիմ, ատենը մէկ ձայներնիդ։

— Հա՛, հա՛, հա՛, աղէկ դարձար այդ անկիւնը, տէրտէ՛ր, — սկսաւ խնդալ գիւղապետը։

— Հապա ի՞նչ — փորձեց արդարանալ տէրհայրը — ո՞ւր գանեմ ձեզ։

— Մեր հետ ի՞նչ գործ ունիս։ Աստուծդդ սիրեա։

— Ինչպէս թէ՝ ի՞նչ գործ ունիր... Տէր Աստուծած, իմ ծուխերս չէ՞ք ձանը՛մ, ատենը մէկ պէտք չէ՞ որ զձեզ տեսնեմ, ձեզի հոգեւոր խորհուրդ տամ... չէ՞ որ Աստուծոյ առջեւ պատասխանատու եմ ձեզի Համար։ Զեր քահանան չի՞մ, վերջապէս — վրդովումով մը ոտքի ելաւ տէր Սթայքօն։

— Բաել է, — զարմացաւ գիւղապետը — դո՛ւն պիտի պատասխանես մեր տեղը։

— Ե՛ս, հապա ո՞վ...։

— Վայ, չըսե՞ս... պատասխանէ՛, նայինք, երբ հարկահաւաքը գայ գլխուս անկուի։

— Ես պիտի պատասխանեմ Աստուծոյ առջեւ, ա՛յ մարդ։

— Աղէկ, տէ... վնասներս պիտի վճարե՞ս, երբ կարկուտը զարնէ արտերս...»

— Կարկուտն ու արտը ինծի՞ ինչ ձանը՛մ, ես պատասխանատու եմ քու հոգիիդ համար։

— Հոգի՛ մի՞... ձգէ, Աստուծդդ սիրես, տէրտէ՛ր... հոգի՞... գուն սա օղին հեղ մըն ալ ձնիլ, տէ — աւելցուց՝ անոր երկարելով թակոյկը — ան նայէ... մեռնելէս ետք հոգիս թող իր տէրտը հասկընէ Աստուծոյ։

— Մեղք է, մեղք... մե՛ծ մեղք... եթէ ամէն մարդ ատանկ ըսէ ու մոռնայ Աստուծոյ հրամանները, Սոդոմ Գոմոր կը դառնայ աշխարհը, իրական Սոդոմ Գոմոր... երկնային կրակ կը թափի վրա-

նիս, Տանքօ՛, ու ողջ ողջ կ'այրինք ամէնքս...

Ու նստաւ կրկին, օդին տարաւ բերնին և աչքերը գոց՝ երկար ուժավ մը առաւ։ Կ'ուզէր կրկին բերնին տանիլ բայց գիւղապետը առիթ չառաւ։

— Այս տարի քանի՞ կաթսայ սալոր եփեցիր։

— Ե՞ս, — վրայ բերաւ տէրտէրը, — հինգ կաթսայ միայն ու այդքանն ալ տեղեկացուցի կառավարութեան։

— Կը սաես, տէրտէ՛ր։

— Ճշմարիտ կ'ըսեմ, Տանքօ, եթէ չես հաւատար...

— Կը նայիս աչքերուս և ծեր գնչուի պէս կը ստես։

— Զե՞ս հաւատար... օդիի համար սուտ խօսեւիք չեմ անշուշտ։

— Երդուընաս ալ՝ նորէն չեմ հաւատար քեզի, տէրտէ՛ր... ես քու սալսրներդ չե՞մ գիտեր, ճանըմ... Դուն է՞ն քիչը տասը կաթսայ եփած ես. հայտ ութը ըսենք... ի՞նչ կը պատմես ինծի... կը ստեն կ'ըսես՝ կը գանգատիս, ամմա դուն ստւտին տանիստան կ'ըսես, տէրտէր։

— Ե՞ս... ե՞ս ստեմ...։

— Դուն հապա, ո՞վ... քող-վրայ ըրէ, հայտ, մարդ չիմանայ... ամբողջ գիւղը կեղծ յայտարարութիւններ տուաւ. խօսքը մէջերնիս՝ ես ալ պակաս ցուցուցի, դո՞ւն շիտակը պիտի ըսես, դուն որ ամէնէս աչքրաբացն ես... ըսէ նայինք հը՛, ինչո՞ւ սուտ կը խօսիս ու հոգիդ մեղքի մէջ կը ձըռքես։

— Ե՞ս մեղք գործեմ, մեղա՛յ, մեղա՛յ, — իշրար անցաւ տէրհայրը՝ խաչը խաչին հանելով՝ Աստուած չընէ որ սուտ խօսիմ... սոկիի մէջ լողալս գիտնամ, նորէն չեմ ստեր... զիս սպաննէ, այդ խօսքը մի՛ ըներ Տանքօ...։

— Որո՞ւ կը պատմե՛ս աէրտէ՛ր։ Զգէ որ քու խելքդ ալ հասած է թէ աս աշխարհիս մէջ կտոր մը չստած ու չխափած՝ գործ չի յաջողիր... Ասոր հետ մէկտեղ, մեղք գործելը անոյշ կու գայ մարդուս...։

— Այդ անուշութի՛ւնը պիտի ուտէ աշխաքի գլուխը եա — կրկին ձայնը բարձրացուց տէր հայրը — Սոդոմ Գոմոր, ուրիշ բան չէ...։

Ու մինչ, իբրեւ թէ չափազանց յուզուած, կը փորձէր թակույկը կրկին բերանը տանիլ քաղցրանոյշ ձայն մը բաբախում տուաւ սրտին։ Ցլէթանըն էր, Պոսիլքէի բարեկամուհին, որ ցանկապատին հտեւէն պոռաց։

— Պոսիլքէ՛, Պոսիլքէ՛...

— Ո՞վ է պոռացողը — ձայն տուաւ գիւղապետը։

— Ես եմ, ե՛ս... Պոսիլքէին կը պոռամ։

— Եկա՛յ, — լսուեցաւ Պոսիլքէին ձայնը, ու տէր Սթայքօն օդին բոլորովին մոոցաւ, երբ գիւղապետին աղջկան հասակը սահեցաւ իր առջեւէն ու երկարեցաւ դէպի ցանկապատը։

— Ի՞նչ կայ, Ցլէթօ։

— Եկու... շո՛ւտա... գուշակ մը կայ տուներնիս...։

— Գուշակ, — զարմացաւ Պոսիլքէ։

— Այս՛... տեսնե՛ս, — խօսքը ուղղեց գիւղապետին — անա՛նկ ճիշտ կը գուշակէ... ամէն, բան կ'ըսէ...։

— Իրա՞ւ — խանդավառուեցաւ Պոսիլքէն, ու ծոկցաւ՝ արտգորէն անցաւ ցանկապատի ցած անցքէն։

— Կնկայ խե՛լք, — հեղնեց տէր Սթայքօ, — հազար հեղ ըսած եմ սա կնիկներուն որ ականջ

Հկախեն գուշակներուն ու կախարդներուն։ «Հա» կ'ըսեն, ըստիդ կը համոզուին, բայց նորէն գիտացածնուն չեն շեղիր և Աստուծուն օրը կը լեցնեն գնչուներուն տոպրակները։

— Անցեալ օր ալ գնչու մը եկեր էր գուշակելու համար — ընդհատեց գիւղապետը — կնիկներուն բախտը նայեցաւ, իմ բախտս ալ ուզեց նայել ու ես ալ, իմ ամբողջ խելքովս։

— Է՛, նայի՞լ տառիր, — գոչեց տէրաէրը հեղական շեշտով մը։

— Հապա՛։

— Իրա՞ւ կ'ըսես, պայի Տանքօ... դուն գոնէ խելացի, կարդացած մարդ ես, Աստուծածդ սիրես։

— Կարդացած ամա՝ հատէ... կնիկներուն խելքին խելք գրի...։

— Է՞... ի՞նչ ըստ քեզի։

— Ի՞նչ պիտի ըսէ, վերէն վարէն թող առւաւ, մէկ ըստծը միւսը չբռնեց։

— Սուտ մի կ'ուզես, այդ անիծեալ գնչունեներուն մօտ։

— Բայց, ոմանք ալ ձիշտ բաներ կ'ըսեն, ձայնը բարձրացուց Տանքօն՝ ինքնավստան շեշտով մը, թէև, աէր հայրը չամածայնեցաւ։ Ու, ոտքի կանգնելով։

— Ամէնքը մէկ ջուրով լուալիք են, վճուց։

— Վազ անցիր, աէրտէր — ընդդիմացաւ Տանքօն — ես անանկ գուշակներ տեսած եմ ի՞...։

— Հա՛, պատմած ես ինծի, — վերյիշեց տէրհայրը, — սա Թրակիոյ մէջ տեսածդ, հէ՞, Պալքանեան Պատերազմին։

Ոտքի ելաւ և Տանքօն։ Սիկառ մը վառեց, ներս քաշեց ծուխը, գուրս առւաւ ուժգին, ու հիւմա աւելի ինքնավստան։

— Է՛, — հարցուց։ — ս՞ր գուշակածը չելաւ։

Բայց աէր հայրը տեղի չտուաւ։ Ինք Աւետարանի մարդ էր ու գիտէր որ միայն աստուծածային շնորհ ունեցողները կրնան գուշակել։ Ատոր համար մօտեցաւ Տանքօյին, նախ սիկառ մը ապահովեց ու դեռ չվառած։

— Դիպուած պարզապէս, — ըստւ, — ըսէր է՝ անանկ ալ պատահէր է։

— Թօաֆ ես աէ՛րտէր, դուն ալ ըսէ Տէ թող պատահի տեսնենք։ Ան ինծի ըստւ որ պիտի վիրաւորուիս ու վիրաւորուեցայ։

— Կրնայիր և չվիրաւորուիլ նանմ, — իրար անցաւ աէրնայրը, որ կ'ուզէր վառել սիկառը։

— Այս, կրնայի չվիրաւորուիլ, բայց դուն ան նայէ որ վիրաւորուեցայ։ Բաել է՝ մարդուն ըստծը ելաւ։

Ու այնքան խոր հաւատքով ըստւ որ, աէր հայրը չկրցաւ անպատճախանի թողուլ, ու վէճը տաքցաւ։

Տանքօն այն համոզումին էր որ մարդուն ճակատադիրը գրուած է, ամէն ինչ գրուած է, միայն թէ ամէն մահկանացուի աչք կարող չէ կարդալ զայն։

Եւ ոսկայն, չյաջողեցաւ համոզել աէրտէրը։ Թէեւ, այստեղի գուշակներուն խօսքը չէր ըլլար, անշուշա։ Ինք տեսեր էր գուշակներ... հէ՛... գուշակներ կ'ըսեմ ձեզի։

— Այս, բայց, ես ատանկ գուշակներ տեսած չեմ, առարկեց տէրտէրը։

— Թրակիոյ մէջ շա՛մ։

— Ինչու հոն կայ և հոս չկայ, զարմացաւ տէր Մթայքօն։

— Ես գիտե՞մ։

— Իսկ ես բնաւ չեմ հաւատար, պնդեց նորէն տէրհայրը:

— Մեր լուսանկարիչն ալ չի հաւատար — աւելցուց Տանքօն — ու կ'ըսէ թէ խելքերնուն փչածը դուրս կու տան:

— Հապա ի՞նչ, ընդմիջեց՝ տէրտէրը՝ ուժ առած այս անգամ, ու նկատեց որ իր խօսակիցը նայուածքը յառեր էր կէտի մը ու կը մտածէր: Երբ ուզեց իմանալ պատճառը.

— Թօաֆ բան — մրմիջեց Տանքօն, — անցեալ օր գնչուն եկեր էր զիւղ ու կը զուշակէր, մեր վարձակալը կը լուսանկարէր զայն:

— Ինչո՞ւ, չնարցուցի՞ր պատճառը:

— Անանկ, առի հետաքրքրութիւն կը լուսանկարեմ, ըստւ... Սոփիայի մէջ, ըստւ, ասանկ բարդեռու մերակլըներ կան...

— Ճիշտ է, վրայ բերաւ տէրտէրը, Սոփիայի մէջ ինչե՛ր չկան...

Ու պահ մը լուսւթիւն տիրեց: Եւ այս անգամ խօսակցութիւնը վերսկսաւ Տանքոյենց տունը վարչակալ, սոփիացի երիտասարդին՝ Փանչոյի մասին: Քանի մը օրէ իվեր չէր երեւար: Ու տէր հայրը ուզեց գիտնալ պատճառը:

— Սոփիա գնաց — պատասխանեց Տանքօն, — որպէսզի քարդերը ծախէ. դէ՛զ մը քարդ-փոստալ պատրաստեր էր, ըստւ թէ լուսանկարի զանազան նիւթեր պիտի գնէ ու պիտի վերադառնայ:

— Ի՞նչ, նորէն մարդ պիտի լուսանկարէ, ո՞վ մնաց գիւղը որ, օդափոխութեան եկողները լուլորն ալ մեկնեցան, իսկ լեռները չըջող չմնաց այլեւս:

— Ա պէ՛, տէրտէր, տղան թող քիչ մը գայ լաքուր օդ չնչէ ու հանգստանայ, ողջ ամառը մարդ լուսանկարելէն գլուխը ուռեցաւ, սա մութ սենեակէն դուրս ելած ունէ՞ր խեղճը:

Ու մինչ իր վարձակալի մասին կը խօսէր, յանկարծ միտք մը ծնաւ մէջը: Անդրադարձաւ որ, ոչ թէ մութ սենեակէն, այլ գինետունէն դուրս չէր գար, առատօրէն կը ծախսէր, կ'ո՛ւտէր՝ կը խը մէր... բայց ինչ որ հաճելի էր՝ Փանչօն օրը օրին կը վճարէր վարձքը: Տէրտէրը ըսես, չէր կրցեր այս տարի վարձակալ մը գանել իր սենեակին համար:

— Դուն մեռել մը աւելի թաղելուդ նայէ, — ըստւ Տանքօն:

— Մեղք է Տանքօ, իսկ բաց բերանդ:

— Է՛, աղէ՛կ ա պսակ մը աւելի ըրէ:

— Անկէց ալ իսկ չկայ... ժամը փոր չի կշա-

ցըներ այլեւս...

— Պարապ խօսք, տէրտէր, — զարմացաւ Տան-

քօ — ևս ինքզինքս գիտնալէս ի վեր՝ տեսած չեմ որ

տէրտէր մը անօթի մեռնի:

— Անանկը չէ Տանքօ: Ժողովուրդը աղքատա-

ցաւ, փարա չկայ մարդոց մօտ, շահադէտները կո-

ղոպակցին զանոնք...

— Շահադէտներուն մեղքը մի մտներ. Ժողո-

վուրդը ինքզինքը կողոպակց, — պատասխանեց

Տանքօ, ու, աւելի բարձրացնելով ձայնը, — քիչ մը

փարա տեսան պատերազմէն վերջ, ու գործը պարա-

խին զարկին... հագութիւ, սքսւիւ, մօսային հետեւիւ

... վրան չլրածդ՝ մետաքս հագաւ, աղբար...

Ու դեռ խօսքը վերջացուցած չէին, երբ Պո-

սիլքէն՝ վազելով բակ վերադարձաւ հեւինեւ թո-

թովելով.

— Հայրի՛կ, տեսնե՛ս, անանկ զուշակ մը ա-

նանկ զուշակ մը... մէջ մը կը նայի ձեռքիդ ու

ամէն բան կ'ըսէ... օրինակ անունդ կը զուշակէ...

— Անունս մի՞ն, զարմացաւ գիւղապետը:

— Այս', անունդ ալ:
— Գնա գործիդ, Աստուածդ սիրես:
— Սիրէնի չըլլա՛յ, Պոսիլքէ, — մէջ ինկաւ տէր՝
հայրը, — Կամ՝ կախարդ մը... աօնավաճառները լի-
ցուն են ատանկներ...
— Ի՞նչ կ'ըսես, տէրհայր, — բողոքեց Պոսիլ-
քէն, — ասիկա պատուած հագուստներով ու կուզ
զնչու մըն է...
— Կանչէ նայինք, — հետաքրքրուեցաւ գիւ-
ղապեաը — ըսէ թէ պրն, գիւղապեաը զինքը կ'ու-
զէ:
— Արդէն ըսի որ գայ, — ուրախացաւ Պոսիլ-
քէն, — հիմա պիտի գայ:
Ու նոյն խնդութեամբ մտաւ առւն:
Երբ տէր հայրն ու գիւղապեաը պահ մը կըր-
կին առանձին միացին, գիւղապեաը չկրցաւ զսպել
իր զարմանքը: Տեսեր է մարդը, այս', լաւ դուշակ-
ներ տեսեր էր, բայց ասանկը չէր տեսեր:
— Թօա՛ֆ բան, — կը մըմնիէր, — անունդ
գուշակէ...
— Ականջ մի կախեր, Տանքօ, — կը պնդէր
տէրաէրը, — ով գիտէ ո՛ր շարլարանն է: Աշխարհ
ձիգուիթ գարձեր է հիմա...
Բայց խօսքը չկրցաւ աւարտել, կրկին բակ և
կաւ Պոսիլքէն՝ անհամբերու աղմկոս: Ետեւէն մայ-
րը՝ Փենան, որ, մեծ հետաքրքրութեամբ մը նայե-
ցաւ շուրջը, բայց չգանելով գուշակը.
— Ո՞ւր է, աղջիկս, մարդ չկայ, — հարցուց:
Պոսիլքէ վազեց գէպի ցանկապատը.
— Ահա, կու գայ, — գոչեց:
Ու բակ մտաւ գնչու մը՝ կուզը անկած, վը-
տիս, բասիք մը գլխուն, ու երկու տոպրակ մը
ուսէն կախած: Աեւ ու մեծ ակնոց մը կը ծածկէին

աչքերը: Կաղ էր, բեռան տակ, դժուարաւ կը քա-
լէր: Հազիւ սաքը բակ դրած, կեցաւ, նայեցաւ
շուրջը, և գնչուներու յատուկ տոռդանութեամբ մը,
— Շուները կապա՞ծ էք, — հարցուց:
— Մի վախնար, — ձայնեց Պոսիլքէն, — շու-
նը հոս չէ:
— Բարե՛ւ, ձայնը բարձրացուց գուշակը —
պ. գիւղապեատ:
— Աստուծու բարին... ու ակնոցով գնչու ալ
կ'ըլլայ, չըսէ՞ս, — զարմացաւ գիւղապեաը:
— Է՞ն, սեւ գնչուին՝ սեւ ակնոց, — պատաս-
խաննց գնչուն:
— Ի՞նչ գործ կ'ընես:
— Գնչու ըստծդ չորպածի, գիւղէ գիւղ կը
մուրայ, ...
— Հեռուէ՞ն ես:
— Այս', շատ հեռուէ՞ն:
— Ազէ՛կ, ո՞ւրկէ:
— Թրակիայէն, չորպա՞ծի:
— Վա՛յ, Թրակիայէ՞ն, ըսիր:
— Այս', ...
— Լսեցի՞ր տէրաէր, Թրակիացի եմ, կ'ըսէ:
— Այս', չորպածի, թափառական հնք... Վա-
րը՝ գաշաին մէջ ենք, պղտիկները անօթեցան... հաց
չկոյ, մէյ մը գիւղ երթամ, ըսիր...
— Ասէ՛ ո՞ւր պիտի երթաք:
— Վեր, չօրպածի, մինչեւ Դանուբ... Դանուբն
ալ տեսնենք... Անկէ անդին՝ Աստուած ողորմած է:
Ուսքի կանգնեցաւ գիւղապեաը, մօտեցաւ գըն-
չուին, որ աւելի կծկուեցաւ, և նստելով գուշակին
քով:
— Հայտէ, աեսնենք, ցուցուր սա վարպետու-
թիւնդ, — ըստւ՝ ձեռքը երկարելով:

Գուշակը բռնեց պայի Տանքոյին ձեռքը, քըն-
նեց, զննեց, դարձուց քանի մը հեղ, գլուխը շար-
ժեց ու զարմացական կամ հիացիկ արտայայտու-
թիւններ տալով դէմքին, ըստ.

— Ես չորպածի բան մը չեմ գիտեր... ըսողը
ձեռքն է...

— Աղէկ, ճանը՛մ, ի՞նչ կ'ըսէ, նայինք ձեռքը,
— վրայ բերաւ անհամբեր գիւղապետը, նայելով
հեղ մը իր կնոջն ու աղջկան, որոնք հետաքրքրու-
թեամբ եկեր ցցուեր էին դիխուն վերեւ:

Ու զուշակը կրկին առաւ գիւղապետին ձեռ-
քը, և, մէկէն.

— Ա՛յ — ձայնեց:

— Ի՞նչ է, խեր ըլլայ — վախցաւ գիւղապե-
տը:

— Ոսկի՛ ձեռք ունիս, չորպածի, ոսկի ձեռք...

— Հա, հա, հա՛, — ծիծաղեցաւ քահանան:

— Մի՛ խնդար... տէրհա՛յր, — սրտնեղեցաւ
զուշակը — ձեռքը չի խօսիր յետոյ:

— Անանկ է եա, — սրտնեղեցաւ և՛ գիւղա-
պետը, — ին՛կ սպասէ տէրտէր...: Հա լաւ նայէ
տեսնեմ, — աւելի իրար անցաւ գիւղապետը:

— Ոսկի ձեռք... ամմա, ամբողջովին ոսկի...

— Է՛, ի՞նչ կը ցուցնէ տափկա:

— Հարստութիւն, չորպածի, հարստութիւն...
Ո՛ւ տունէն ոսկի պիտի հօսի... ամմա, ոչ անանկ
մանրուք ոսկիներ... Պարկո՛վ...

— Ի՞նչ կ'ըսէս... խելքի՞դ դպաւ, ի՞նչ է, —
զարմացաւ գիւղապետը: Բայց աւելի մօտեցաւ գըն-
չուին:

Իրար կոթնած՝ իրարու կը ժպաէին և մայր ու
աղջիկ:

— Ես խենդ չեմ... ձեռքիդ ըստածը կ'ըսէմ քե-

զի... այս տունը ոսկի պիտի հօսի, կ'ըսէմ քեզի —
ձայնը բարձրացուց — Հասկցա՞ր... թի՛ւ թի՛ւ
թի՛ւ... աչք չառնէ... ոուրբի ձեռք է կարծես...
կ'ուզես՝ երդւըննամ՝ եթէ չեմ հաւտասր:

— Հարկաւ չեմ հաւտասր...

— Դուն արդէն հարուստ ես՝ չորպածի...
տուն, խանութ, արտեր...

— Ի՞նչէ՞ն գիտես, — զարմացաւ կրկին գիւ-
ղապետը — կը լսե՞ս կնիկ...

— Արտեր ունիս, — շարունակեց գուշակը —
գրգռելով անոնց հետաքրքրութիւնը — արօտատե-
ղիներ, այգինե՛ր... լեցուն է ամբարդ... ութը^ւ
կաթսայ ողի...

Ալ չդիմացաւ գիւղապետը... արտը, էգին՝ ա-
ղէկ, սա օղիին կաթսային ութը հատ ըլլալը ո՞ւր-
կէ գիտես եօթը օտար գնչուն... մինչ գնչուն կը
շարունակէր քննելով անոր ձեռքը.

— Նա՛... նորէն ոսկի... միշտ ոսկի... Չորպա-
ծի, ես ասանկ ձեռք մինչեւ հիմա չեմ տեսած... ա-
սանկ ոսկի...

— Աղէկ, ոսկի, ոսկի... ո՞ւր է սա ոսկին ձա-
նըմ...

— Մօտ ատենէն... տանդ մէջ — խորհրդաւոր
ձեւով մը պատասխանեց գնչուն...

— Ի՞նչպէ՞ս, ե՞րբ — ձայնեցին բոլորը միա-
բերան:

Կամաց, կամաց — հանդարտեցուց զիրենք
գնչուն՝ միշտ բռնելով գիւղապետին ձեռքը — սա
ոսկին անանկ չուտ շուտ... ինչպէս ըսեմ՝ այսօր
վաղը չի գար...

— Երեք չորս ամիսէն... իսկ առողջութիւննիդ
երկաթի առողջութիւն ունիս, չորպածի... երկար,
շատ երկար պիտի ապրիս...

Ու տեսնելով քոլորին հետաքրքրութիւնը.
 — Անունդ — վերսկսաւ գուշակը — անունդ
 ալ ըսեմ... Տա... Տա...
 — Հըմ — ցատկեց տեղէն գիւղապետ...
 — Տա... Տա... Տա'նքօ:
 — Ո՞ւրկէ իմացար, այ մարդ:
 — Զեռքդ ըսաւ չորպանի:
 — Պարա'պ խօսք — մէջ ինկաւ քահանան,
 կրկին — մէկը ըսած ըլլալու է անոր... ես չեմ հա-
 ւտար:
 — Զե՞ս հաւատար լու քու ձեռքի տուր — ը-
 սաւ գուշակը:
 Բայց քահանան վարանեցաւ, ու գնչուն, իս-
 լելով անոր ձեռքը, նայեցաւ, քննեց ու զննեց և.
 — Ա՛ռ քեզի ոսկի ձեռք մըն ալ — ձայնեց —
 ճիշտ գիւղապետին ձեռքին պէս... ի՞նչ է աս ոսկին,
 ձանը՝ այս տանը մէջ...
 — Ինձի նայէ, գնչու, — գոչեց տէր հայրը
 սա անիծեալ լեզուովդ մի' խարեր զիս ալ... սա
 անունս ըսէ, տեսնենք...
 Գուշակը կրկին նայեցաւ ձեռքին, երկար
 չունչ մը առաւ, մտածել ձեւացուց, և՝
 — Սթօ... Սթօ... Սթօեան, — գոչեց:
 Ու բոլորը մնացին ափ ի բերան... գիւղապե-
 տին կինը ձշաց, նոյնիսկ զարմանքէն, գիւղապե-
 տը գլուխը շարժեց, իսկ Պասիլքէն սրտին ծաղիկը
 պատուր էր ուրախութենէն...: Բայց քահանան շա-
 րունակեց յամառիլ:

— Ո՛չ — ըսաւ — չեղաւ, չգիտցար անունս:
 — Կարելի է — չքմեղանք մը փորձեց գուշա-
 կը — ձեռքդ այնքան ոսկիով ծածկուած է որ, ա-
 նունդ դժուար կը կարդացուի... բայց, սպաէ',
 սպաէ'... հա կնոջ անուն մըն ալ կայ... կեցիր կե-
 ցի՛ր...

Ու մինչ քահանան անակնկալի եկած, կ'ու-
 զէր ետ քաշել իր ձեռքը, գուշակը անութին տակը
 առաւ անոր բազուկը, նայեցաւ եեղ մըն ալ ձեռ-
 քին ու՝
 — Վա... Վա... Վասիլքա — գոչեց:
 — Ամիկա դրացուհին է աէր հայրին — վրայ
 բերաւ գիւղապետին կինը:
 — Դրացուհին... ինչ որ ձեռքին մէջ է...
 թերեւս սէր մը...
 — Զայնդ կտրէ' — զայրացաւ քահանան՝ կաս
 կարմիր կտրած — կիցը կերածիդ պէս՝ կուզդ դուրս
 կը թափի հա՛...
 — Աման, տէրհայր, պաղատեցաւ գնչուն, —
 իմ մեղքս ի՞նչ է... ես կարդացածս ըսի...
 Ու գեռ բաներ մը կը մրմար, բայց գիւղա-
 պետը ուժեղ հազար մը քողվրայ բրաւ, մինչ Պո-
 սիլքէն՝ կոնակը տուած մօրը՝ քթին տակէն
 կը խնդար: Ընդհանուր արածադրութեան վրայ
 պաղ հով մը փչեր էր հիմա: Զայն վանելու համար,
 գիւղապետը կրկին իր ձեռքը երկարեց ու.
 — Նայէ, տեսնեմ, — ըսաւ, — սա ոսկիի մա-
 սին բաներ մը ըսէ ինծի...
 Գուշակը գողդողալէն առաւ գիւղապետին ձեռ-
 քը, և, առանց ձայնը բարձրացնելու, վերսկսաւ.
 — Շա՛տ ոսկի, շա՛տ... մօտերս շատ պիտի հա-
 րըստանաս...
 — Բայց ի՞նչպէս, ո՞ւրկէ — հետզետէ աւելի
 զարմացաւ գիւղապետը — առեւտուրէ', կալուածէ',
 ի՞նչչ...
 Գնչուն, որ ակնոցին տակէն կը դիտէր գիւ-
 ղապետին և չուրջիններուն դէմքերը, ձայնին ա-
 ւելի խորիրդաւոր շիշտ մը տուաւ ու ըսաւ.
 — Հոս, շուրջի... տանդ մէջ... այս', այս',

ոսկին կու գայ, ոսկին կը հոսի՛ օտար մարդու մը
ձեռքերէն, որ քու առւնդ կը բնակի...

— Եա՛... ո՞վ է այդ ծանօթը — աւելի մօտեցաւ
գիւղապետը՝ աչքերը չորս բացած:

— Զեմ գիտեր, չորպաճի... ձեռքը չի տար ա-
նոր անունը: Այդ մարդը դեռ քու սիրտդ մտած
չէ՝ ինչպէս տէրհօրը գրացուհին անոր սիրտը...

— Զայնդ կարէ՛, — զայրացաւ կրկին տէր
Սթայքօն — խերդ կ'անիծեմ՝ Ասաուած վկայ...

Ու այնքան խոռվեցաւ, որ գիւղապետը քահ
քահ մը փրցուց, և, խօսքը ուղղելով տէրհօրը,

— Մի ատքնար, տէրտէր — ըսաւ, — մարդը
ի՞նչ յանցանք ունի, ձեռքիդ մէջ անանկ գրուած է
եղեր:

Բայց տէրհայրը չանդարտեցաւ: Ինքնիրմէն
եղած՝ աւելի մօտեցաւ գնչուին և ուղեց ինքնու-
թեան թուղթը՝ գիտնալու համար թէ ո՞վ էր և
ուրկէ կու գար:

— Հա՛ — հեգնօրէն պատասխանեց գնչուն —
գնչու և ինքնութեան թուղթ... տէրհայր, մեր
թագաւորութեան կործանումէն ասդին մեր ցեղը
կը թափառի...

— Ուրեմն, դո՞ւք ալ թագաւորութիւն ունե-
ցած էք, — մէջ ինկաւ Պոսիլքէն՝ որ մինչեւ այդ
լուս կը մնար:

— Անշուշտ — հալարտացաւ գնչուն — մեր
թագաւորութիւնը եղած է ամէնէն առաջին թա-
գաւորութիւնը, հէ՛յ, աղջի՛կ, մենք ալ մեր թա-
գաւորները, մեր թագուհիները մեր ժանտառները
ունէինք...

— Ու բոլորն ալ սե՞ւ էին քեզի նման —
կրկին հարց տուաւ Պոսիլքէն:

— Հարկաւ, անոնց ալ պօյան խաս էր իմինիս
պէս...

Մինչ այդ Պոսիլքէն ձեռքը երկարեր էր ար-
դէն ու կ'ուզէր իրն ալ նայիլ:

Գնչուն շտկուեցաւ, առաւ դեռատի աղջկան
ձեռքը, նայեցաւ, դարձուց, կրկին նայեցաւ, և
սկսաւ արագ արագ դուրս տալ:

— Սեւաչուի, սեւահեր, ժիր ու ձէյրանի պէս
երիտասարդ մը...

— Այ մայրիկ, իմս ալ գիտցաւ — գոչեց
Պոսիլքէն:

Մինչ գնչուն շտրունակեց՝ աւելի ուժգին շեշ-
տով:

— Պոսիլքէ, սիրուն աղջիկ, քու ձեռքդ ալ
սոկի կը ցուցնէ...

— Անո՞ր ձեռքն ալ — գոչեց գիւղապետը:

— Այս, չորպաճի, ու քու սրտիդ մանչն ալ
սոկիներու մէջ է — դարձաւ կրկին Պոսիլքէին,
մինչ ան գրեթէ խելակորոյս, կ'ոստոստէր կեցած
անդը՝ փաթթուելով մօրը պարանոցին և «իմ ա-
նունս ալ գիտցաւ» պոռաւէն...

— Մետաքս, սոկի — շտրունակեց գնչուն —
իր մազերուն պէս և իր սրտին պէս... մես աքսով և
սոկիով պիտի ողողէ և քեզ...

— Ո՞վ է այդ տղան — հետաքրքրուեցաւ գիւ-
ղապետին կինը, — ըսէ անունը, նայինք...

— Զեմ գիտեր, հանը՛մ, ձեռքը չ'ըսեր... բայց,
մօտ է, հոս է, ձեր մէջն է...

— Մեր գիւղէն է:

— Ո՛չ, Ո՛չ... օտար է, դուրսէն մէկը...

— Դուրսէն մի՛, լաւ, հեղ մ'ալ նայէ ձեռքս
— ձայնեց գիւղապետը — կարելի է հոս գրուած է
անոր անունը:

Գնչուն կրկին առաւ գիւղապետին ձեռքը,
նայեցաւ և,

— Այդ մարդը ձեր տունն է — վճռեց — դը.
դա՛մ, դրա՛մ կը հոսի...

Ու գիւղապետին մաքին մէջ բոսկապէս լոյս
մը ծագեցաւ, քաշեց ձեռքը, ակնարկը սփռեց պահ
մը գնչուին, և դառնալով տէրհօրը,

— Լուսանկարիչը չըլլա՛յ — գոչեց:

— Ի՞նչ գործ կ'ընէ, — հարցուց քահանան
գնչուին:

— Ոսկի արհեստ ունի... ոսկի ապարանջան
ունի ձեռքը տէրհայր...

— Աղէկ, ձանըմ, — հարցուց կրկին գիւղա-
պետը — ի՞նչ արհեստ է այդ:

— Զէ գրուած, չորպաճի... բարտկ արհեստ
մը... ամէն մարդու ընելիք գործը չէ...

— Ե՞ս — զարմացաւ այս անգամ տէր հայ-
րը — հելէ իմ ձեռքս ալ նայէ նորէն...

Գնչուն աւելի համարձակութիւն առաւ, աւել-
իի երկար քննեց տէրհօրը ձեռքը և տիրական.

— Այդ մարդը քու գրպանդ ու դրամ պիտի
հոսեցնէ, դրա՛մ, դրա՛մ, կ'ըսեմ քեզի... ոսկի...
ու կաթսաներով... ճիշտ ութը կաթսայ... օղի...

Ու տէր հայրը ցնցուեցաւ: Ութը կաթսայ օղի
... է՞ որ ինք միայն հինգ կաթսայ ցոյց տուած
էր... ուրեմն այս անպիտան գնչուն ամէն գաղտ-
նիք կը կարգար: Որով և քաշեց ձեռքը: Ու կարգը
եկաւ գիւղապետին կնոջը:

— Երկարէ ձեռքդ, հանը՛մ — ձայնեց գնչուն
— նայիմ, նայիմ, աս ինչ մուպարէք ձեռք է...
ոսկի... երջանկութիւն ու գիւղպիւշ կայ ձեր տու-
նը... հարսնիք ֆենա հա՛նըմ...

— Ո՞ս՛, իմ անունս ալ գիտցաւ — զարմացաւ
Փէնան:

— Ատանկ գրուած է — վրայ բերաւ գնչուն
— հանը՛մ... Ա՛ս ի՞նչ ոսկի ձեռք...

Ու գիւղապետը ու չգիմացաւ: Այս «ոսկի»ն
խելքը գլխէն առաւ: Հրեց կինը, անցաւ կրկին
առաջ, երկարեց ձեռքը ու գոչեց.

— Սա իմս նայէ... նորէն նայէ... սանկ լաւ
հասկնանք սա գործը, ձա՛նըմ...

— Գործ ըսածդ, չորպաճի՛, ոսկին ինքնիրեն
պիտի հոսի... հազա՞ր... միլիո՞ն...

— Միլիո՞ն...

— Ի՞նչ է ատ «միլիոն» ըսածդ — զարմա-
ցաւ գնչուն:

— Միլիոնէն չատ ու չատ վեր — բացատրեց
գիւղապետը:

— Աղէ՛կ, բայց, ես այդքան համրել չեմ գի-
տեր, չորպաճի՛... սանկ մինչեւ միլիոն... գնչուն
մարդուն խելքը կարձ կ'ըլլայ...

— Լո՞ւ, ե՞րբ պիտի վազէ այդ ոսկին:

— Մէկ երկու ամիսէն:

— Ինծի նայէ — ըսաւ գիւղապետը — եթէ այդ
ըսածդ ըլլայ...

— Անպատճառ, չորպաճի — ընդհատաց գնչուն
— անպատճառ, ինքնիրենը պիտի հոսի... ես ինչ
որ ըսած եմ՝ եղած է...

— Այն ատեն՝ աչքս նայէ... Էնկ մը փարա
քեզի...

Ու գտնալով իր կնոջն ու աղջկանը՝ գլխով
հաւանութիւն տուաւ անսնց ալ սանկ՝ պո՛լ էնսէն:
Հարկա՛ւ, ինչո՞ւ չտայ մարդը: միայն թէ՛ այ մը
հոսիլ սկսի սա ոսկին...

Ու գնչուն, նոյնքան ողեւորսւած, թէմէննան
ըրաւ գիւղապետին, հազար փառք ու օրհնէնք
տուաւ:

— Աստուած օրերդ չատ ընէ, չորպաճի՛... ոս-

կիդ առատ ըլլայ, չորպաճի... թոռեր ու թոռան
զաւակներ տեսնես, չորպաճի...

Եւ աւելի աղաչական շեշտ մը տալով ձայնին,
— Իսկ հիմա քիչիկ մը օղի տայիր ինծի, չոր-
պաճի, ու քիչ մը հաց...

— Կտոր մը ուտելիք տուէք սա մարդուն —
հրամայեց գիւղապետը — օրս չէն ըրաւ՝ եկաւ...

— Եկուր, նստէ՛ հոս — ձայնեց Փէնան՝ ցոյց
տալով նստարանը: Գնչուն հետեւեցաւ անոր՝ տոպ-
րակը քաշկոտելով իր հետ, ու նստաւ: Եւ մայր ու
աղջիկ մտան տուն:

Երբ գիւղապետն ու տէրհայրը քով քովի գա-
ցին, պահ մը լոռութիւն տիրեց: Երկուքն ալ տար-
ւած էին ոսկի երազներով, ու կը նայէին իրարու:

— Է՞, ասոր ի՞նչ կ'ըսես — ի վերջոյ խզեց
լոռութիւնը գիւղապետը:

— Եղբա՛յր, — պատասխանեց տէր հայրը —
այս գնչուն խելքս զլիսէս առաւ:

— Հապօա իմս...

— Իբրեւ թէ ես բնաւ չէի հաւատար ասանկ
բաներու:

— Ի՞նչպէս պիտի չհաւատաս, տէրաէր, տղու-
խօսքեր կ'ընես երբեմն... անունդ կ'ըսէ, կաթսա-
ներուդ թիւը կ'ըսէ... ի վերայ ամենայնի՝ դրա-
ցուհիդ անունն ալ կ'ըսէ...

Ու նայեցաւ տէրհօր աչքերուն: Տէրհայրը շա-
ռագունեցաւ, դեղնեցաւ, թուքը կուլ տուաւ, և,
քիչ մը շուրջը քննելէ վերջ,

— Աս տեղ ստեց շունչանորդին... դուն զիս կը
ճանչնաս, Տանքօ... մեղայ, մեղայ... հաւատայ որ
բան մը չկայ... ի սէր Աստուծոյ... մեր մէջ թող
միայ... խեղճ կինը բերնի ծամոց չըլլայ... Որբեւ-
այրիին միսը ծամելը կը սիրեն, գիտես եա՛...

խաչ վկայ՝ հոգիս անմեղ է գառան պէս...

— Մի՛ վախնար — հանգստացուց գիւղապե-
տը — կնիկս ու աղջիկս ֆարդին չգացին...

— Հապօ գո՞ւն, — կրկին գնչուին վրայ նետ-
ուեցաւ տէր հայրը — դրացուհիիս համար հեղ մըն
ալ բերանդ չբանաս, խերդ կ'անիծեմ հա՛... քեզ
շան սատակ կ'ընեմ...

— Ամա՛ն, տէր հայր, — սկսու կակապել
գնչուն — աղսցս սիրոյն... հրացան չհանես...
մարդու բան պիտի չըսեմ...

— Ինծի նայէ, տէրաէր — մէջ ինկաւ գիւղա-
պետը — այս գնչուն շիտակ ըստաւ ամէն ինչ... Ան
թրակիացի է, ես լաւ կը ճանչնամ թրակիայի գու-
շակները... ինչ որ ըսեն կ'ելլէ... դուն սա ոսկի-
ներուն նայէ, տէրաէ՛ր, ոսկի պիտի գայ, կ'ըսէ
քեզի...

— Տա՛ր Աստուծ...

— Աղէ՛կ, նստէ մտածենք, նայինք:

Ու երկուքը նստան քով քովի: Նոյն պահուն
ներս մտաւ Պոսիլքէն ու գնչուին քիչ մը օղի տը-
ւաւ:

— Ա՛ռ, — ըստաւ սիրալիր — խմէ՛ մեր կե-
նացը:

Գնչուն խլեց օղիին ամանը, ժպիտ մը ուր-
ուագծեց գէմքին վրայ, ու ճնկեց օղին, աղջկան
հօրն ու մօրը կենացը: Յետոյ, սրբելով բերանը,

— Առաջ Աստուծ, — ըստաւ — ամէն ինչ ու-
զածիդ պէս պիտի ըլլայ... այս ձմեռ հարսանիք,
միւսին մանկիկ...

Ու Պոսիլքէն քահ քահ մը փրցուց:

Բակ եկաւ և՛ մայրը թենան՝ կտոր մը հաց ձեռ-
քը: Տուաւ գայն գնչուին:

— Շէն մնաս, տունդ բարիքով լեցուի, — ըս-

կըսաւ լեզու թափել գնչուն՝ առնելով հացը և ուտելով կայն:

Մայր ու աղջիկ նստան անոր քով: Մինչ անդին բակին միւս կողմէ, գիւղապետն ու տէրհայրը կը խորհրդակցէին.

— Կը մտածեմ, կը մտածեմ՝ ուրիշ մը չեմ կրնար գտնել, եզրակացուց գիւղապետը — նորէն սա մեր լուսանկարիչը ըլլալու է... Անկէ զատ ո՞վ կայ օտար մեր տանը մէջ:

— Այս, — հաստատեց քահանան:

— Ան է, ձանը՛մ, իօսէ՝ բարակ ալ արհեստ ունի աղան ձեռքը: Ուրեմն, — աւելի ողեւորուց ցաւ — ան է որ մեզի սոկի պիտի բերէ... անոր ձեռքէն սոկին պիտի հոսի, հա՞...

— Պա՛, — առարկեց քահանան — այդքան հարո՞ւստ է այդ ստանան:

— Ո՞վ գիտէ:

— Եւ կամ՝ թերեւս նոր հարստացած է... ինչն սակայն. լուսանկարելո՞վ... բնաւ խելքս չի պառկիր: սոկի արհեստ... վա՛զ անցիր — կրկին թերահաւատ մնաց քահանան:

— Տէրսէր, — առարկեց գիւղապետը — քեզի քանի հեղ ըսեր եմ որ՝ աղան օրը օրին կը վճարէ տանը վարձքը, ըսել է՝ լեցուն է գրպանը:

— Վարձք ըստծո՛ սոկիի կոյտ չէ, Տանքօ՛, գնչուն սանկ ձեռքերը աղբիւրի պէս բացաւ, չտեսո՞ր, չէ որ, շան աղան Աստուծուն օրը մեծ դրամ կ'աւրէ սրճարանը ու մնացածը առանց համրելու գրպանը կը նետէ, աղէ՛կ, այդքան դրամ լուսանկարչութենէ չիշահուիր, ա՛յ մարդ:

— Թերեւս հօրմէն մնացած է:

— Այդ պարագային, ինչո՞ւ գիւղ եկեր լուսանկարչութիւն կ'ընէ, — դիտել տուաւ քահանան:

— Է՛, թէ օդափոխութիւն, թէ շահ:

Ու երկար վիճեցան, այսպէս: Եւ եկան այն եզրակացութեան թէ՝ կասկածելի աղբիւր մը ունէր գիւղապետին վարձակալը, բայց թէ ի՞նչ էր այդ աղբիւրը՝ չկրցան կոահել:

Քիչ յետոյ, գնչուն ոտքի ելու: Փէնան կը տոր մը հաց եւս տուաւ անոր ու գնչուն մեկնեցաւ:

Նոյն պահուն, յանկարծ միտք մը յլացաւ աէր հայրը, մօտեցաւ գիւղապետին ու հարցուց.

— Երբեւէցէ մտած ես իր սենեակը:

— Ոչ:

— Փա՞կ է դուռը:

— Այս՛, բայց բանալին ներսն է:

— Հոս բեր:

— Ինչո՞ւ:

— Բեր կ'ըսեմ քեզի:

Ու գիւղապետը գնաց բերաւ բանալին, դուռը բացին և մտան ներս:

Ու շատ չանցած՝ սենեակէն նետուեցան բակ:

— Գտա՛յ, գտա՛յ, — գոչեց քահանան:

— Ի՞նչ բան, — իրար անցաւ գիւղապետը:

— Հո՛ս նայէ, — ու լուսին բռնեց լուսանկարի ապակի մը:

Գիւղապետը նայեցաւ, կրկին նայեցաւ, ափ ի բերան՝ պոռաց.

— Թղթադրա՛մ...

— Տեսա՞ր — խանդավառուեցաւ քահանան:

— Տասնոց է ձիշտ նոյն գոյնը...

— Օձիքը ձեռք ձգեցինք վերջապէս: Ասոր համար տասնոց թղթապէտիներ կը մանրէ... ձանըմ, ես ալ զարժացայ... թագաւորի գանձ ըլլայ չի գիշանար կ'ըսէի... հը՛, Տանքօ, կը տեսնե՞ս...

— Աղէ՛կ, բայց խելքս դեռ չպառկեցաւ, աէր-
մէր...

— Ամմա՛ ըրիր հա՛... մարդը կեղծ թղթա-
դրամներ կը շինէ եղիր:

— Կէ՞ղծ ըսիր...

— Այո՛, այս ապակիէն կը հանէ...

Ու զարմացած՝ գիւղապետը կրկին ձեռքն
առաւ ապակին, քոնեց լոյսին, նայեցաւ ու մրմբ-
ռաց.

— Ճիշտ ու ճիշտ թղթադրամ... նկար, գիր,
ստորագրութիւն... որո՞ւ խելքէ կ'անցնի...:

Ու պահ մը մտածելէ վերջ, նայեցաւ քահա-
նային և հարցուց.

— Օրը քանի՞ հասա կը հանէ կ'ըսես,

— Բ՛ն, քանի հատ... հանէ ու հանէ... գըր-
պանն ու ծոցը լեցուն է, կ'ըսեմ քեզի... և գի-
տե՞ս ինչպէ՞ս կը դնէ. կ'ափոտկէ ու հօ՛փ կը նետէ
ներս... մենք ըսես՝ տասը լէվային վրայ կը դո-
ղանք:

— Աղէ՛կ, բայց արգիլուած չէ՞, անդրադար-
ձաւ գիւղապետը:

— Հարկա՛ւ:

— Ուրեմն անմիջապէս լուր տանք ոստիկա-
նութեան:

— Սը՞սթ — շշնչաց աէրհայրը՝ մատը բերնին
տանելով — խենդեցա՞ր, ի՞նչ է...

— Ինչո՞ւ:

— Խելքդ գլուխդ բեր, Տա՛նքօ, գնչուին ը-
սած ոսկիի աղբիւրն է աս...

— Հա՛, զարմացաւ յանկարծ գիւղապետը —
իրա՞ւ: Առ քեզի ոսկի, հէ՞ — մօտեցաւ քահանա-
յին — Առ քեզի օտար մարդ՝ տանս մէջ... Առ է
եղեր հա՞... Ծօ՛, ոսկին մեր ծոցն է եղեր ու մենք

լուր չունինք... Ես ան գնչուին բերանը պագ-
նեմ...

— Դուն աղօթէ Ասառւծոյ... Անոր գործն է
աս: Դուն՝ քուն՝ բախտդ արթուն, Տա՛նքօ... Ալ
ասկէ ետք՝ կոնակդ առւր պատին ու քէյֆ ըրէ...
մինակ թէ...

— Ի՞նչ:

— Առաջ փորձենք հեղ մը, աեսնենք պիտի
հասկնա՞ն որ կեղծ է, եթէ անցնի՝ գործերնիս ի՞նչ
է, օրն ի բուն կը հանենք...

— Ու սնառուկը կը լեցնենք...

— Մուխը դուրս չելլէ, սակայն, Տա՛նքօ, յե-
տոյ կը մարի մուխերնիս հա՛...

— Խե՞նդ եմ աէրաէր...

Անցան օրեր: Առաւօտ մը գիւղապետը կրկին
նստեր էր տանը բակը ու թերթ կը կարդար, ակ-
նոցը անցուցած քթին:

Պոսիլքան, նստած անոր քով, աջ կողմի գը-
րանը կից գրուած նստարանին վրայ, կ'ասեղնա-
գործէր: Հագած էր սպիտակ պլուզ մը:

Բակ եկաւ և Փէնան, կապերտ մը ձեռքը: Ու
տեսնելով Պոսիլքէն,

— Օհօ՛, — գոչեց — աս մեր հանըմը մութն
ու լուսին հարսի պէս հագուեր սքուեր, եկեր՝ գո-
գոռուեր է...:

— Ամա՞ն, մայրիկ — սրանեղեցաւ Պոսիլքէն,

— վայրկեան մը օձիքս չես ձգեր...

— Վա՛յ, չխօսի՞նք... կարծես տանը մէջ ու-
րիշ գործ չկայ ու առառուն կանուխ դանդէլատ է
պակաս մնացեր...

— Հիմա հոգիս հիւսել ուզեց...

— Գիտե՛մ, գիտե՛մ ինչու...

— Է՛ — մէջ ինկաւ գիւղապետը՝ գլուխը վեր-

ցընելով ու ակնոցին վրայէն ծուռ մը կնոջը նայելով — ի՞նչ կը կոսւրտիք աքլորներու պէս... արդան պիտի արթնցնէք:

— Ամա՞ն սա քու պարոնդ, ա՛յ մարդ — խօսքը ամուսնոյն ուղղեց Փեհան, — գնչուին եկած օրէն ասդին կը դողաս կոր վա՛յ... ով գիտէ ինչ մալ ըլլար...

— Սըստ... ի՞նչ կը պառաս կնի'կ:

— Ինչ պիտի չպոռամ, խելքս շնասնիր, այդ լուսանկարիչը ի՞նչ է խօթեր ձեր երկուքին գլուխը...

— Դէ՛ն, կարձ կապէ ըսի քեզի:

Ու այնքան ձայնը խստացուց, որ Փեհան նախընտրեց թուքը կլլել ու ներս երթալ, Քիչ վերջ կրկին բակ եկաւ, ու կանդ առնելով ամուսնոյն քով,

— Ինծի նայէ — շշնչաց — խելքդ գլուխդ ժողվէ, կը տեսնե՞ս ի՞նչ է եղեր աղջիկդ...

— Մայրի'կ, — դժգոհեցաւ Պոսիլքէն:

— Նայէ, նայէ հեղ մը, նոր պլուզ առանց դոգնոցի:

— Է՞ն, ի՞նչ կայ:

— Անոր համար է — ցոյց տուաւ գլխովը Մանչոյին պառկած սենեակը — լուսանկարիչիդ...

— Ճիշտ չէ, — առարկեց աղջիկը, ոտքի ելլելով, մասւ տաւն:

— Ո՞ւր կը փախչիս, հը, կեցիր նայինք ի՞նչ պիտի ըսէ հայրդ:

— Ամչցուցիր աղջիկը, ա՛յ կնիկ, — գիտել առւաւ գիւղապետը — նորէ՞ն լուսանկարուիլ կ'ուզէ:

— Զէ, ճանը՝ մ... կ'ուզէ աչքը մտնել, չե՞ս հասկնա՞ր:

— Իրա՛ւ ամէն բան գիտցաւ այդ շունչանց որդին:

— Ան ըստւ ու ասոր գլուխը մտաւ հեղ մը, կը տեսնե՞ս, լուսը լուսնալուն՝ եկեր նստեր է...

— Ի՞նչ ընենք, եթէ խըսմէթ է...

— Համմէթ... լուսանկարիչի մը կառրի՞ն... հէ՛յ, խելքդ գլուխդ ժողվէ, Տա՛նքօ, աղջիկս տամանոր որ տօնավաճառէ տօնավաճառ հետը պտացնէ, հա՞...

— Հարուսատ լուսանկարիչներ ալ կան, բոլորն ալ փանալիրնիներ չեն եա՛... չե՞ս յիշեր, Սոֆիայի մէջ քանի լուսանկարչատուններ տեսանք՝ այս ալ պիտի հարստանայ, գուն մի նայիր անոր կերպարանքին, անանկ վարպետ է որ... նուրբ արհեստ ունի... անոր ձեռքէն սոկի պիտի հոսի, սոկի'...

Ու, ոգեւորուած, ոտքի ելաւ գիւղապետը: Փեհան պահ մը մտածեց, ուրախացաւ, բայց յանկարծ դառնալով ամուսնոյն.

— Աղէկ ամմա, — վրայ բերաւ — ոն եթէ հարստանայ կ'առնէ՞ մեր աղջիկը... քի՞չ քաղաքացի աղջիկներ կան:

— Ապէ՛, վազ անցիր հիմա այդ «եթէ»ներէդ, ատոնք Աստածոյ գիւղալիք բաներն են, գուն մի խառնուիր աս զործերուն:

— Որպէս զի խելքիդ փչածը ընես: Ինծի նայէ, Տա՛նքօ՝ ձայնը բարձրացուց Փեհան — խելքը գլուխդ ժողվէ, գիւղապետ պիտի ըլլաս, իսորեթէ գիւղին ամէնէն խելացի մարդնես, բայց լուսանկարիչը մը խելքին խելք դրեր ես...

— Կարձ կապէ ըսի քեզի՛. ես խելքի խրատի պէտք չունիմ... Բանէ խապար չունի, ելեր խելք կու տայ:

— Խապար ունիմ չունիմ, ես մէկ բան գիտեմ — խելքդ տուն կանչէ ու սա լսւսանկարիչին ըսէ, իրիկուն չեղած պակամը ժողվէ ու երթայ, հասկըցա՞ր:

— Ի՞նչ ըսիր, խենդեցա՞ր, կնիկ:

— Ես՝ ոչ, բայց, եթէ այսպէս երթայ քուաղջիկդ պիտի խենդենայ... կարծես գիւղը ալ մանչ չմնաց, ու առ հայլազին պիտի տամ աղջիկս...

— Մի խառնուիր իմ գործերուս... քանի՞ հեղպիտի ըսեմ քեզի: Դուն քու գործիդ նայէ:

— Աղէկ, ես կ'ըսեմ պէտք եղածը անոր:

— Ի՞նչ:

— Եւ հիմա նոյնիսկ...

Ու մինչ Փենա քայլերը ուղղից դէպի լսւսանկարիչին պառկած սենեակը, Տանքօ զայրացած սաքի ելաւ, աչքերը բացած կեցաւ կնոջը առջեւ սպառնական՝

— Հելէ փորձես, պոռաց հելէ փորձես նրբ մը ըսել աղուն, Սստուած վկայ հարամ կ'ընեմ օրդ... Սրւոր նայէ, խելք պիտի տայ ինծի... կնկայ խելք... փի՛ւհ հաւու չափ խելք չկայ դանկին մէջ...

Ու, տեսնելով որ կինը մըմուալէն առւն կը մանէ ինք ալ եկաւ կրկին նստաւ աթոռին վրայ: Ու վերսկսու կարդալ, Քիչ յետոյ ձայն մը լսուեցաւ ներսէն: Փենայինն էր, նոյն զայրացկոտ շեշտով աղջկան կը պոռար ու կը յանձնարաբէր շուտով հանել սպիտակ պլուզը: Բայց, Պոսիլքէն եկաւ գուրս ու կրկին նստաւ նստարանին վրայ, Նոյն պահուն բակ մտաւ և' տէր Սթայքօն, արագ քայլերով մօտեցաւ գիւղապետին ու անհամբեր հարցուց.

— Ելա՞ւ:

— Ո՞չ, տակաւին կը քնանայ:

— Մինչեւ ե՞րբ ճանըմ, — սրտնեղեցաւ քահանան — զարմանալի բան:

— Կ'երեւի շատ յոդնած է, քեզի չըսի՞ ու գիշերը ուշ եկաւ ինքնաշարժով: Քաղաքն էր: Առանձին էր ինքնաշարժին մէջ:

— Եա՞: Չըսես նորէն դրամով եկած է:

— Անանկ կ'երեւայ, սակառով մը գնաց ու աղուոր վալիզով մը վերադարձաւ, ասկից զատաղուոր ալ ձամբու պայուսակ մը՝ պաշտօնեաներուն ունեցածին պէս: Այնպէս ալ ուրախ էր որ...

— Ան ուրախ է, բայց հեղ մալ ինծի հարցուր, տեսնենք... Այն օրէն ի վեր խելքս գլուխս չէ... ամէն տեղ կ'երեւայ աչքիս... ծայրը ծայրին չեմ կրնար աղօթք մը անդամ ընել...

— Հապա ե՞ս, օրն ի բուն գիւղապետարանին գանձը աչքիս առջեւն է... ես ալ ասանկ մը պիտի ունենամ կ'ըսեմ ինքնիրենս... և կամ առոր աւելի մեծը...

Քահանան նստաւ գիւղապետին քով: Նայեցաւ շուրջը: Յետոյ գրապանէն հանելով երկու թղթաշումներ, բացաւ ափին մէջ և սպենորուած.

— Մարդ ի՞նչպէս չթոցնէ խելքը, Տանքօ', — ըստւ, — նայէ՛, նայէ՛, վարայէն անոյշ բան կա՞ ըստւ, — նայէ՛, նայէ՛, վարայէն անոյշ բան կա՞ ըստւ, մէջ... Այս առանց հարիւրնոց մըն ալ աւրեցի որ աւելի վստահ ըլլամ թէ կը քշուի...

— Անո՞ր չինածներէն:

— Այո՛, նայէ՛ Տանքօ՛: Բնաւ տարբերութիւն չունին իսկականներէն... հա՛յ Աստուծ մէկ թիւն չունին իսկականներէն... հա՛յ Օրդ հաղար ընէ, ա՛յ տղայ... թերեւս թերութիւն օրդ հաղար ընէ, միայն դրամատունէն կրնան մը ունին: բայց, միայն դրամատունէն կրնան մը հասկնալ: Վաղը պանքա պիտի տանիւմ մտա մը գըրամ ու ասոնցմէ ալ պիտի խառնեմ մէջը, եթէ բան մը չըսեն քէրֆիրնիս տեղն է...

— Այն ատեն է որ սոկի պիտի հոսի մեր տու-
նէն ներս — վրայ բերաւ գիւղապետը:

— Վա՛յ դնչու վա՛յ... մնաւ չհաւտացի շան
զաւակին ըսածին, մեղայ քեզ Աստուած, մեղայ
— սկսաւ խաչակնքել քահանան — փրկեայ զմեզ ի
փորձութենէ...

— Քեզի չըսի՞ թէ անոր ամէն մէկ ըսածը
կ'ելլէ: Թրակիացի է ան, տէրտէր...

Գիւղապետ ու քահանայ քիչ մը եւս խօսե-
ցան: Տէր Սթայքօն բաւական անհամբեր էր, կ'ու-
զեր որ լսուանկարիչը ժամ առաջ արթննար և
«Իթէ ըլլալիք է սա գործը, ըլլար՝ լմնար»: Ու
մինչ գիւղապետը կը յանձնարարէր քիչ մը համ-
բերատար ըլլար ոտքի ձայներ լսուեցան: Ան էր:
իրար անցան:

— Ես պիտի խօսիմ — ըսաւ տէր հայրը:
— Ինչու:

— «Ինչո՞ւ»... սրովհետեւ կրնաս յօնք չինե-
լու տեղ աչք հանել... ձգէ ինծի սա գործը...

— Միայն թէ աչքը չվախցնես տղուն, գի-
տես եա՛, գիւղապետ եմ, իշխանութիւն օրէնք, կը
քաշուի ինձմէ: Սանկ խորամանկ ձեւով մը մօտե-
ցիր:

— Մինակ ձգէ ուրեմն մեզ:

— Եօ՛ — զայրացաւ գիւղապետը հապա ա-
ռանց ինծի համաձայնութեան մը գալու ըլլաք:
— Մի վախնար, մարդ Աստուածոյ, քեզ չեմ
խաբեր:

— Ճանըմ, դուն չես խաբեր բայց, լաւ է որ
իրարմէ գաղանի բան չունենանք, ինչո՞ւդ պէտք...

Լուսանկարիչին հազին ձայնը ընդհատեց խօ-
սակցութիւնը, նայեցան, գէպի սենեակ: Եւ որով-
հետեւ Մանչօ կոկորդալիր կը հազար, քահանան,
սրտնեղած՝

— Ուհ, փարլա, — մըմոաց — քանի՞ ժամ
պիտի հազայ, դեռ պիտի սպասէ՞նք:

Նոյն պահուն սակայն, սենեակին դուռը բաց-
ուեցաւ ու երեւցաւ Մանչօն, — երկայնահառակ,
ազուամազով շրթունքին վրայ, ձերմակ շապիկով
և ոտքերը բոպիկ: Յօրանջեց ու ճապկացաւ: Եւ,
աչքերը բացխիկելով,

— Բարի լո՛յս, չորպաճինե՛ր, — ըսաւ:

Պոսիլքան տեսնալով Մանչօն մտաւ տուն:

— Աստուածոյ բարին վրադ, լաւ քնացա՞ր, —
հարցուց գիւղապետը հոգածու ձայնով մը:

Ոտքի ելաւ քահանան, սիրալիր մօտեցաւ
Մանչօյին, և երկարելով իր ձեռքը բարի գալուստ
մաղթեց: Յետոյ հարցուց թէ ի՞նչ նոր ու հետա-
քրքրական բան կար մեծ քաղաքը:

— Է՛հ, տէր հայր, օր նոր՝ լուր նոր, — պա-
տասխանեց Մանչօն՝ խորհրդաւորութիւն մը տալ
ջանալով իր ըսածին — Սոփիան առանց նորու-
թեան կ'ըլլա՞յ:

Եւ որովհետեւ Մանչօն նստիլ կը ցանկար,
գիւղապետը վազեց՝ աթոռ մը ձարելու հոմար: Յե-
տոյ, ձայնը ձգած՝ Պոսիլքին «չուտով երեք սուրճ»
յանձնարարեց, ու եկաւ նստաւ տէր հօրն ու Ման-
չօյին քով:

Մանչօ գրպանէն հանեց սիրակոէթի տուփ մը
ու գիւղապետին և տէր հօր երկարելով հրամցուց:
«Տուպիլ եքսդրա» էր. գիւղապետը որ այս տեսաւ՝
հիացաւ, բերնին ջուրերը սկսոն վազել, մինչ
Մանչօն ըսաւ:

— Ալ մոոցայ երբորդ տեսակը:

— Իսկ մենք փախստական ծխախոտ կը ծը-
խենք, — վրայ բերաւ գիւղապետը:

— Աղէկ բայց, — աւելցուց քահանան, — ա-

մէնքը անոր ետեւէն են. աեսնենք ո՞ւր կ'երթայ ծայրը:

— Իսկ ես «Տուպլը»էն սկսայ ծխել — հպարտացաւ Մանչօ:

— Գործդ լայնցաւ — ակնարկեց գիւղապետը աչքին ծայրովը դիտելէն Մանչօն:

— Ոչ թէ լայնցաւ... հը՛, ըսէ՛ ծով դարձաւ հաստատեց, տէր հայրը:

— Ի՞նչէն, — հարցուց գիւղապետը՝ առիթը յարմար նկատելով:

— Եատ պարզ կերպով: Երբ Առֆիտ գացի՝ յօրեղբայրս մեռաւ:

Այս պատասխանը պատ քաշեց երկուքին առջեւ: Իրարու նայեցան: Տէրհայրը հեղ մը հազաց, ու սրտաբեկ ձայն մը հանելով:

— Մօրեղբա՞յրդ, Աստուած լուսաւորէ հոգին:

— Ամէն, — վրայ բերաւ գիւղապետը:

— Աստուած լուսաւորէ հոգին — կրկնեց Մանչօն՝ երկիւղած ու տրաում իրը թէ — լաւ մարդէր, զիս շատ կը սիրէր, գիտէ՞ք որքան լացի թառումին...

— Հարկաւ, ձա՞նըմ, ատանկ լաւ մարդ մը ձայնեց գիւղապետը:

— Եատ ալ հարուստ, էր ամբողջ ունեցածը ինձի թողուց, տուներ, խանութեներ, հող, դրամ, — և գոհունակօրէն զարնելով ձեռքը գրպանին հարուստի հազ մը կեղծեց:

— Հարուստ մօրեղբայր ունիս եղեր, ու հոսեկեր լուսանկարչութեամբ կը զբաղէիր — նկատել առւաւ քահանան:

— Որովհետեւ, — արդարացաւ Մանչօն — անսրոշած էր ոչինչ տալ ինձի՝ մինչեւ իր մահը. ես ակոսա սեղմած սպասեցի մեռնելուն: Զգէ որ պէտք ալ չունէի:

— Այս՛, ուրիշ լուսանկարիչներու բերանը կը հոտի անօթութենէն, իսկ դուն, հը՛, ժողովիլ փորձեց տէրտէրը — բաւական լայն կ'ապրիս:

— Ա՛, այս՛, գանգատելու բնաւ պատճառ չունիմ, լաւ գործ ըրի ձեր գիւղը, խոստովանեցաւ Մանչօն:

— Կաւ գործ ըրիր, ու լաւ ալ դրամ առւիր գիւնեպան Փէնչօյին, պատասխանեց տէր հայրը, — ան ալ քու երեսէդ խնդաց քիչ մը, աս տղան շա՞տ պիտի յիշեմ կ'ըսէ ինձի. միշտ նոր թղթադրամներ կու տայ ինձի, Աստուած օրերը շատ ընէ, նիուս աւելցուց:

— Է՛, ձեռքս ի ծնէ բաց է, տէր հայր:

— Մարդուս ձեռքը բաց է երբ գրպանը լեցուն է, տղաս:

— Անշուշտ, — մէջ ինկաւ գիւղապետը որ մինչեւ այդ լուս էր — երբ մարդուս գործը կը յաջողի... ազգականներուն ալ կը յաջողի...

— Այս՛, ամէն ինչ բախտ է. ոմանք հոգինին կը հանեն, բայց գործերնին կրկին չի յաջողիր. իսկ ուրիշներ մատերնին հազիւ կը դպցնեն ու ահա կը հոսի դրամը ամէն կողմէ՝ թէ առեւտաւրի և թէ անձանօթ կամ գաղանի արհեստի մէջ...

— Ի՞նչ գաղանի արհեստ, տէր հայր:

— Օրինակ — կմկմաց տէր հայրը — օրինակ... ըսենք կեղծ թղթադրամներ չինելու ձեռնարկած է:

— Այս՛, կեղծ թղթադրամներ — երկրորդ գիւղապետը՝ նայելով քահանային աչքերուն:

Խօսքը բերանն էր, երբ ահսաւ Պոսիլքէն, որ սուրճ կը բերէր:

Սուրճերը եկեր էին արդէն ու Պոսիլքէն նազանքով ու շիկնելէն բերաւ բակ: Մօտեցաւ, խընդաց ու բարի գալուստ մաղթեց Մանչոյին:

Երբ Պոսիլքէն առւն մտաւ, գիւղապեաը անդրադարձաւ կէս թողուած խօսակցութեան։ Եւ աւելցուց։

— Է՛, Մանչօ, գանք սա կեղծ թղթադրամներու խնդրին։

Բայց, Մանչօն, պահելով իր պաղարիւնը,

— Կեղծ դրամ շինողը ծակը կ'երթայ, — պատասխանեց։

Այս պատասխանը շատ հաճելի չերեւցաւ գիւղապեաին և քահանային։ Անպիտան աղան կրկին պատքաշեց առջեւնին։ Ու մէկ ալ բանտէ, պատիժէ, խօսեցաւ, Քահանան սակայն, բաւական խորամանկ էր ու քօղ-վրայ ըրաւ։

— Ես ալ — ըստ անմիջապէս — այդ կ'ուզէի ըսել, ով որ չի յաջողիր՝ կը բռնեն ու հոփծակը, իսկ ով որ կը յաջողի՝ թէ իրեն համար ունի և թէ իր բարեկամներուն համար . . .

— Այս', այս', — կրկին իրար անցաւ գիւղապեաը — թէ իրեն և թէ իր բարեկամներուն համար։

— Աղէկ բայց ուշ կամ կանուխ ան ալ բանտ կ'երթայ — կրկին դիտել տուաւ Մանչօն։

Ու մինչ գիւղապեաը կրկին խօսիլ կը փորձէր, քահանան նշան ըրաւ որ գոյցէ բերանը։ Յետոյ, սքեմին ծայրերը ժողվելէն,

— Տղա՛ս, ըստ, ան հել մը իր բեռը շինուէն վերջ, եթէ բան գործ չունիս բանտ տար, զինքը ալ հոգն է անոր... Երբ կը խորհիմ թէ այդ որքան դիւրաւ կրնայ հարստանալ, շիտակն ըստած՝ իմ հոգիս ալ երբեմն կ'ուզէ թղթադրամներ կեղծել...

— Ինչե՛ր կ'ըսես տէր հայր, — ձայնը բարձրացուց Մանչօն... հը... ի՞նչ ես եղեր այսօր...

Նայէ, պ. գիւղապեաը որքան կը զարմանայ ըստ ծիդ... .

— Ո՛չ, — մէջ ինկաւ գիւղապեաը — հիմա բան չի զարմացներ զիս։

Մանչօն, առարկեց, սակայն։ Ու ըստ թէ գիւղապեաը առաջինը պիտի ըլլար քահանան ձերբակալողը, երբ նման փորձ մը ընէր ան։ Ու յետոյ ելաւ ստքի ու գնաց հագուելու։

Երբ Մանչօ սենեակ մտաւ, գիւղապեաը զարմանք յայտնեց որ ցանցը չինկաւ տէրտէրին։ «Խորամանկ բան է» վրայ բերաւ քահանան։ Ու ակնարկը ուղղելով Մանչօյի սենեակին, «Նայինք, ըստ, մեզմէ որը աւելի խորամանկ դուրս պիտի դայ!»։

— Մեծ մի խօսիր, տէրտէր, — դիտել տուաւ գիւղապեաը — կեր՝ ապա գոհացիր։

— Դուն հոգ մի ըներ, անոր հոգին ձեռքս է։

— Ի՞նչ հոգի։

— Կաղապարը՝ — գոչեց քահանան՝ ես անոր հետ պիտի խաղամ ինչպէս կատուն մուկին հետ։

— Բայց եթէ ըսէ թէ կաղապարը իրը չէ։

— Դուն վկայ ես, գնչուն ալ։

— Ուրիշ կաղապարներ ալ ունենալու է։

— Ով զիտէ, ան պատահաբար մոռցած է սեղանին վրայ ու մեր ձեռքը ինկաւ ահա. տարօրինակ բան, հոս գնչուն մեզի սոկի կը գուշակէր, մինչ անդին սեղանին վրայ դրուած է եղեր մեր բախարը . . .

— Կը աեսնե՞ս — վրայ բերաւ գիւղապեաը — ինչպէս ամէն բան կապուած է իրարու։

Քահանան բաներ մը ունէր ըսելիք, բայց լըռեց. ոտքի ձայն կար։ Բակ մտաւ Քամպուրովը՝ արագ քայլերով։ Բարեւեց։ Գիւղին վարժապեան է։

Գիշերն էր վերադաշտած գիւղ։ Ըստւ թէ կ'ուզէր տեսնել Մանչօն, սրավհետեւ անոր ապսպրած էր, Սովիայէն լուսանկարի ապակի բերել իրեն։ Գիւղապետ ու քահանայ իրարու նայեցան։ Յետոյ, քահանան դիտել առւալ թէ «այդ արհեստը չի վայելեր ամէնքին»։ Բայց վարժապետը ձշեց թէ ինք պարզ սիրող մըն է ու իր աղատ ժամերը կը յատկացնէ միայն։

— Ասանկ բաներու կը ծախսես դրամդ ու յետոյ ալ ամսականս չի բաւեր, կ'ըսես, դիտել տուտւ գիւղապետը սրտնեղած։

Ուսուցիչը չպատասխանեց։ Նիւթը փոխեց ու հարցուց թէ ձի՞շտ է որ անցեալ օր գնչու մըն է եկեր գիւղ, բոլորը հմայեր է, կուներ է անուններն ու ամէն մէկին մէյ մէկ տեսակ յիմարութիւն է ըսեր։ Յետոյ ուզեց իմանալ թէ իրենք եւս տեսած են այդ գնչուն։ Գիւղապետն ու քահանան միաբերան ժխտեցին, ոչ տեսած, ոչ ալ լուսծ ձեւայան։ Քամպուրովը յայտնեց նաև թէ՝ օրն ի բուն գինետան մէջ կը խօսուի այն մասին, թէ՝ հարկ էր վար դնել զայն՝ ստուգելու համար որ խաղ է ըստած թէ իրապէս կը գուշակէ։ Բայց տեսնելով որ գիւղապետը մեծ վատահաւթեամբ կը խօսի «Թրակիացի գուշակի» մասին, գլուխն առաւ մեկնեցաւ ու խնդրեց որ Մանչոյին յայտնեն թէ յետոյ կը ըսկին պիտի գայ զինքը տեսնելու։ Ուսուցիչին մեկնելն վերջ, գիւղապետ ու քահանայ զարմացան «վարժապետի խելք»ին, բայց յանկարծ ապշած միացին, երբ Մանչօն, բանալով սենետին դուռը, ելաւ բակ՝ նոր հագուստ մը հագած, կոլֆ տարատ ու լայն քասքէթով։

— Վայ, ի՞նչ է այս մօսան, — հարցուց գիւղապետը։

Մանչօն յառաջացաւ քանի մը քայլ ես, և, հըպարտ չետով մը՝

— Անգլիական կոլֆ է — պատասխանեց։

— Հիմա այլեւս պարզ է որ դուն լաւ հարստացած ես — աճապարեց քարը տեղաւորել քահանան որ անհամբեր էր ու կ'ուզէր ժամ առաջ բակլան բերնէն հանել՝ ինչպէս կ'ըսեն։

Մանչօն աւելի մօտեցաւ և, երկու ընտիր սիկառնիկներ երկարելով անոնց,

— Դուք ալ իւղստեցէք իմ հարստութենէս, — ըստւ առէք՝ գործածեցէք։

Գիւղապետ ու քահանայ մեծ ու բախութեամբ առին սիկառնիկները չնորհակալութիւն յայտնեցին ու մազթանքները ըրին. իսկ քահանան, երբ փափաք յայտնեց որ «Սստուած Մանչոյին ունեցածին կրկնապատիկը տայ», վերջինը ուժեղ քահ. քահ մը փրցուց ու ըստւ։

— Ի՞նչ կ'ըսես, տէր հայր, ի՞նչ պիտի ընեմ ես այդքան դրամը..

— Այտ՛ն, — ցատկեց՝ տեղէն տէր Սթայքօն — դրամի համար երբեք չըսուիր կը բաւէ, ասիկա ինձմէ խրատ ըլլաց քեզի։

Մանչօն, որ արամագրուած կը թուէր, մէկ մէկ ալ «առուպլը էքսթրա» սիկառ տուտւ քիթերնոււն։ Գիւղապետը մեծ ախորժով սկսաւ ծխել ու յայտնեց թէ չատոնց կը ցանկար այդ սիկառներէն հատ մը ծխել։ Մանչօ ուզեց իմանալ թէ ուր են Պասիլքէն ու մայրը, որովհետեւ անոնց համար ալ «բաներ մը» բերած էր Սովիայէն։

Գիւղապետը ստքի ելու ու կանչեց կինն ու ազջիկը, Պասիլքէն երբ բակ եկաւ՝ ապշահար մնաց՝ տեսնելով Մանչօն այդ հագուստներուն մէջ։ Իսկ Մանչօն, բռնելով իր տարափին երկու քովերէն, փքացած, «Կո՛լֆ» գոչեց։ Յետոյ, գրպանէն հանեց փոքրիկ ծրաբ մը, քակեց զայն, գլխու թաշկինակ

Մը հանեց ու տալով Փէնային որ Պասիլքէէն վերջ
բակ եկեր էր,

— Սոֆիայէն նուէր քեզի ըստ Մայրը առաւ
թաշկինակը, նայեցաւ, հիացաւ, ու հարցուց թէ
միթէ ինք արժանի՞ էր մետաքսեայ գլխակապի:
Իսկ Պասիլքէէն սաքը գետնէն կարեցաւ, երբ Ման-
չօ իրեն տուաւ մանեակ մը՝ ու ըստ.

— Ճիշտ քու սեւ աչքերուդ համար է:

Ու տուաւ նաև տուփ մը բրնձափոշի:

Մայր ու աղջիկ շնորհակալութիւն յայտնեցին:
Իսկ գիւղապետը դառնալով անոնց, դիաել առաւաւ.

— Ատանկ չոր ու ցամաք շնորհակալութիւն
յայտնելով չ'ը՛լլար: Հայտէ, տեսնեմ, երկու հաւ դը-
րէք կրակին վրայ, աղուոր ալ կարկանդակ մը շի-
նեցէք ու ցերեկին փառաւոր ճաշ մը ընենք...

— Բայց, գիւղապետ, — վրայ բերաւ Ման-
չօն...

— Ել՛սթ... խօսք չեմ ուզեր, — ընդմիջեց
գիւղապետը — ձգէ ես ալ իմ մարդկութիւնս ը-
նեմ:

— Ինչո՞ւ անպատճառ այսօր:

— Ոչ, ես այսօր կ'ուզեմ, չեմ թողուր որ այ-
սօր գինեառնը ճաշես... աէրաէրն ալ մեզի հետ
պիտի ճաշէ... հայտէ, կնիկ, երերայ նայինք...

Ու կնոջն ու աղջկան երթալէն վերջ, կրկին
խօսքը ուզզելով Մանչօյին,

— Եկուր հիմա, նայինք, զաւակս, վերսկսաւ,
նորէն նստինք շարունակենք մեր խօսակցութիւնը:

Ու նստան քով քովի:

— Հիմա որ հարստացար, խօսք առաւ աէր-
տէրը, պիտի շարունակե՞ս լուսանկարչութիւնը:

— Այս', պատասխանեց Մանչօն, անշուշտ,
թերեւս աւելի քիչ աշխատիմ, բայց բոլորովին

պիտի չձգեմ: Կ'ուզեմ հող մը գնել այստեղ ու
պղտիկ վիլլա մը շինել:

— Պատօ՛, ձայնը բարձրացուց գիւղապետը,
ուրինին մեր գիւղը պիտի ձգես:

— Ի՞նչպէս ձգեմ. Պուլկարիոյ մէջ ամէնէն ա-
ւելի ձե՛ր գիւղին կը հաւնիմ, օդ, ջուր...

— Իրա՛ւ, մեր գիւղին պէս գրեթէ չկայ, բայց
այս տարի քիչեր եկան օգափոխութեան:

— Է՛, վրայ բերաւ Մանչօն, քրիզ կայ, գիւ-
ղապետ, քրիզ:

— Քրիզ, քրիզ, բայց գուն կրկին կը շահիս,
դիաել տուաւ քահանան՝ միշտ ջանալով իր ուզած
կէտին տանիլ խօսակցութիւնը:

— Է՛, Աստուած յաջողցուց գործս, հիմա այ-
լեւս ամառը կ'անցնի, ես վաղը Սոփիա կը մեկնիմ..

— Ի՞նչ կ'ըսես, իրար անցաւ աէր Մթայքօն:

— Իրա՞ւ, գոչեց գիւղապետը:

Եւ երկուքը մէկ շփոթեցան՝ տեսնելով որ
կրկին ջուրը կ'իյնայ իրենց ծրագիրը:

— Ամրան կրկին հոս եմ, պատօսիսանեց Ման-
չօն՝ պալարիւնը պահելով, այն ատեն պիտի շինել
վիլլաս:

— Ամա՛ն, նա՛նմ, աժգունեցաւ գիւղապետը,
դեռ նոր եկար ու ահա կը մեկնիս:

— Քիչ կեցայ, ամբողջ ամառը հոս էի:

— Գոնէ մինչեւ Տիմիքրով տեն հոս կեցիր,
խնդրեց աէր հայրը:

— Անկարելի է, աէրհայր:

— Լաւ, մինչեւ այգեկութք գոնէ, առաջար-
կեց գիւղապետը:

— Անկարելի է. ժառանգական գործեր ունիմ
կարգադրելիք: Լուսանկարի գործս վերջացուցի,
մէջ մըն ալ գալ ամառ այլեւս:

— Մի՛ ըսեր, ձայնեց տէրտէրը:
— Ինչո՞ւ:

— Կարծեցի թէ կրկին լուսանկարի գործդ
շարտանակես ըսիր. մինչ դուն երթալու կը պատ-
րաստուիս:

Ու մինչ անոնք կը պնդէին, Մանչօ ջանաց
պատ քաշել առջեւնին: Պահ մը ոտքի ելաւ ու լ-
սաւ թէ պէտք է երթայ գինետուն՝ թէ մէկ քանի
բարեկամներ տեսնելու և թէ ասոր անոր գինի
խմցնելու համար: Գիւղապետը առաջարկեց հոն խը-
մել, բայց Մանչօ մերժեց: Ու մտաւ սենեակ՝ գա-
ւազանը առնելու համար:

Տէր հայրը առիթէն օգտուելով, գիւղապետին
ականջն ի վար փսխաց.

— Չեռքէ պիտի փախցնենք, Տա՞նքո...
— Մի՛ վախնար...

Ու երբ կը խորհին թէ ի՞նչ միջոցի դիմեն,
Մանչօն գուրս ելաւ սենեակէն և հրաւիրեց որ
մեկնին: Քահանան, սակայն, քանի մը քայլ յա-
ռաջացաւ գէպի Մանչօն և ըսաւ.

— Սպասէ վայրկեան մը, քիչ էր միացեր որ
մոռնայի....

— Ի՞նչ բանը, զարմացաւ Մանչօն:
Քահանան գրպանը խառնեց ու ապակին դուրս
հանելով,

— Աս ապակին չեմ գիտեր ուրկէ ձեռքս ին-
կաւ, ըսի՛ քուկդ պիտի ըլլայ ու պահեցի...:

Մօտեցաւ և գիւղապետը, այնպէս մը ձեւացը-
նելով թէ նոր կը տեսնէր լուսանկարի նեկարիւր,
բայց աչքին ծարիկովը կը քննէր Մանչօյին դէմ-
քը: Մանչօն ուզեց տեսնել ապակին, և, հազիւ ակ-
նարկ մը նետած,

— Ա՛խ, գոչեց, գաւազանը ինկաւ ձեռքէն և

ինքն ալ երերաց ու հա՛ գետին պիտի իյնար...

Քահանան ու գիւղապետը իրար անցան, բռնե-
ցին թեւերէն և ջանացին գիտակցութեան բերել:
Քահանան կարծեց թէ «վախցած է՝ գաղանիքը երե-
ւան ելլած ըլլալուն», իսկ գիւղապետը «ջո՛ր,
ջո՛ր» կը պոսար՝ աջ ու ձախ վազելէն:

Բայց Մանչօն, չուզելով թելը փախցնել և թա-
ղը իրար անցնել աչքիրը բացաւ և ըսաւ թէ ջու-
րի պէտք չկայ: Իսկ երբ հարցուցին իրեն թէ ի՞նչ
էր պատահած, խորհրդաւոր երեւոյթ մը առնելով,

— Ա՛խ, ըսաւ, բան մը դանակի նման զար-
կաւ սրտիս և աչքերս խաւարեցան...

— Վախցար, տղաս, վրայ բերաւ քահանան,
մի վախնար, մեզմէ մի վախնար...

— Վախնալիք բան չկայ, աւելցուց գիւղա-
պետը՝ կարծելով որ ճամբան կը բացուի արդէն,
նստէ, նստէ սա աթոռին վրայ, կ'անցնի հիմա...
կը բացուիս:

Եւ երկուքը զայն նստեցուցին աթոռին վրայ,
իրենք ալ նստան անոր քով: Զանացն համոզել
թէ վախնալիք ոչինչ կար, փաղաքշանք ու գըգ-
ուանք չմնաց որ չթափէին:

— Ես ալ սխալ ըրի, ցաւիլ կեղծեց քահանան,
ի՞նչ պէտք կար քեզի ցուցնելու զայն:

— Ա՛խ կեանքս ձեր ձեռքն, է տէր հայր, խնա-
յեցէք ինձի...

— Ի՞նչ կ'ըսես, Մանչօ, մենք մաննք
զքեզ, չէ՞ որ բարեկամներ ենք...

Ու մինչ Մանչօն սարսափած կը ձեւացնէր
ինքինքը և կը շարունակէր խնդրել որ խնայեն
իր երիտասարդութեանը, քահանայ ու գիւղապետ
կը կարծէին թէ ալ ամէն ինչ պարզուած է, գտած
են Մանչօյի հարստութեան բանալին, թէ լուսա-

փում չունի իրենց ձեռքէն ու կը մնայ որ ձեւով մը
համաձայնին և իրենք ևս օգտուին այդ «կաղա-
պար»ներէն...

Ու շարունակեցին վստահեցնել թէ մտահոգ-
ուելու ոչ մէկ պատճառ ունի, քանի որ իրենք
բարիք կը կամենան իրեն։ Մինչ Մանչօ, կեղծ պա-
ղատանքով մը կը կրկնէր.

— Ա՛խ տէր հայր, զիս պիտի չյանձնէք, չէ՞...
պիտի փրկէք զիս... երիտասարդ եմ... անփարձ...
սխալեցայ... ալ չեմ աշխատիր այս արհեստը...

— Ո՛չ, ցատկեց տեղէն տէր հայրը, այս արհես-
տը մի թողուր... ի՞նչպէս պիտի ապրիս յետոյ...

— Բայց չէ՞ որ արգիլուած է այս գործը...

— Հը՛, արգիլուած, մէջ ինկաւ գիւղապետը,
մարդ սպաննեցիր միթէ...;

— Գողութի՞ւն ըրիր, տունե՞րը կողոպտե-
ցիր, աւելի բարձրածայն լրացուց քահանան։

— Պետութեան դրա՞մը կերար, վրայ բերաւ
կրկին գիւղապետը։

— Մեղքս այն է որ կեղծ թղթադրամներ շի-
նեցիր...

— Յայտնի կ'ըլլա՞յ թէ կեղծ են, հետաքրքր-
ուեցաւ գիւղապետը։

— Պա՛հ, Ազգային Դրամատան անօրէնն իսկ
չի կրնար հասկնաւ, վրայ բերաւ Մանչօն՝ քաջ
գիտնալով որ երկուքին բարակ թելին կը դպի։

Ու իրապէս, այդ հաւասարիքը ոգեւորեց գիւ-
ղապետն ու քահանան։

— Այդ պարագային, ըստ քահանան, ի՞նչ
բանէ կը վախնաս։ Հա՛, եթէ յայտնի ըլլար ու քեղ
բռնէին, ըսելիք չկար,

— Քերթեն ալ՝ չեն հասկնար, շեշտեց Մանչօն,
այս անգամ աւելի ուժեղ չեշտով։

— Տեսա՞ր, ձայնը բարձրացուց քահանան
խօսքը ուղղելով գիւղապետին, ես քեզի չէ՞ ը-
սեր...

— Ի՞նչ, դուն գիտէի՞ր, հարցուց Մանչօն՝
անակնկալի եկողի մը կերպարանքով։

— Ոչ թէ գիտէի... բայց կասկածեցայ, երբ
տեսայ որ շատ կը ծախսես։

— Ա՛խ, որքան անխոհեմ եղեր եմ։

— Ոչինչ, ոչի՞նչ ապահովցուց քահանան, հո-
տը թշնամիդ չէ առնողը, այլ բարեկամդդ։

Եւ, գրպանէն հանելով երկու դրամաթուղթեր,

— Ասոնք քո՞ւկդ են, հարցուց։

— Թերեւս իմս են, ես իմ թղթադրամներս կը
ճանչնամ երբ քովս են. բայց երբ պետականներուն
հետ կը խառնուին՝ այլեւս չեմ կրնար ճանչնալ
զանոնք։

— Ուրեմն դուն ինքդ ալ չես կրնար ճանչնալ։

— Չեմ կրնար, հարկա՛ւ, այնքան իրարու
կը նմանին որ...

Հիմա, այլեւս, Մանչօն ուրիշ կերպարան՝ ա-
ռած էր։ Վստահ էր իր յաջողութեան ու կը ջանար
օգտագործել պահը։ Իսկ գիւղապետը ափի բերան
մնացեր էր...

Քահանան, իր կարգին, կը կարծէր ափին
մէջ առած ըլլալ Մանչօն։ Աւելի մօտեցաւ ու մը-
տերմիկ շեշտով յը հարցուց։

— Ա՛, ատիկա իմ գաղտնիքս է, ըստ վար-
պետորդի Մանչօն, ոչ ոքի կ'ըսեմ. եթէ օր մը օձի-
քըս ձեռք իսկ տամ՝ գատաբանին առջեւ իսկ պիտի
չխոսապանիմ։

— Իրաւունք ունի վրայ բերաւ գիւղապետը,
ատիկա իր մարիթերն է..., տէրտէր, ի՞նչ խորունկ
կը փորես, ճանը՛մ։

Բայց, Մանչօն նախընտրեց չփրցնել թեւը:
 — Միայն մէկ բան պիտի ըսեմ ձեղի, տեղւցուց: Ո՞ւր է ապակին, տէ՛ր հայր, հա՛, ասիկա նեշկաթիւն է...
 — Կաղապար ըսէ սըւոր, ճշուց գիւղապետը:
 — Այս', տեսակ մը կաղապար, բայց ի՞նչ կաշապար, նայեցէ՞ք հեղ մը:
 — Մենք նայած ենք անոր:
 — Գունաւոր կաղապար, թղթադրամին բոլոր գոյներովն ու գիծերովը: Ասանկ երկու կաղապարէ — որոնցմէ մին թղթադրամին մէկ կողմն է, իսկ միւսը՝ միւս կողմը — ես կրնամ հանել տասը, հարիւր, հաղար թղթադրամներ՝ մէկ օրուան մէջ...
 — Եա՛ բացագանչեց գիւղապետը՝ ապուշ կտրած:
 — Այս', ամէն ի՞նչ այս կաղապարներէն կախում ունի, տարիներ աշխատած եմ մինչեւ որ գըտած եմ ձեւը:
 — Դուն դեռ ուրիշ կաղապարներ ալ ունիս, չէ՞ հարցուց քահանան:
 — Շա՛տ, սնառուկը լեփ լեցուն է: Այս կաղապարը ով գիտէ ուր եմ գրեր ու դուն գտեր ես: Անխոհեմ գտնուեր եմ...
 — Ազօթէ որ բարեկամի ձեռք է ինկեր, Մանչօ, ապա թէ ոչ...
 — Օհօ՛... մի՛ ըսեր, տէր հայր... խերս անիծուած էր... իսկ կոխելը գիւրին գործ է, զօրաւոր արեւ կ'ուղէ, պարզ, ձերմակ ու մեղմ լոյս... որքան շատ փնտուած եմ այս լոյսը զօր ձեր գիւղը գտայ...
 — Բայց չէ՞ որ արեւը ամէն տեղ միեւնոյն ձեւով կը լուսաւորէ, առարկեց քահանան:
 — Կը լուսաւորէ, բայց՝ մեղի, մեր մարդկան այն աչքերուն համար. իսկ թղթադրամի նուրը

գործին համար տեղէ տեղ առաբերութիւն ունի...
 — Անշուշտ, այդ գործին համար մեծ վարպետութիւն կ'ուզէ, տւելցուց գիւղապետը՝ միշտ հիացիկ:
 — Հաղարնոցներ կը շինե՞ս, հարցուց քահանան:
 — Ո՛չ, առ այժմ միայն յիսուննոցներ:
 — Աս ալ կը բաւէ, գոհացաւ գիւղապետը:
 — Մէկ երկու տարի վերջ՝ հարիւրնոց ու հազարնոց, երբ անոնց ալ կաղապարները պատրաստեմ...
 — Զըսե՞ս, կամաց կամաց, աւելի հետաքերքուեցաւ քահանան... Աստուածդ սիրես՝ մինչեւ հիմա քանի՞ կտոր հանած ես:
 Մանչօ քիչ մը մատեց, յօնքերը կիտեց ու ըսաւ. — վեր վար՝ երկու հարիւր հաղար լէվայի...
 — Պրէ՛յ, վեր նետուեցաւ տեղին գիւղապետը
 — ու բոլորն ալ ծախսած ես աղատորէն, հարցուց կրկին քահանան:
 — Շա՛տ աղատ... Նա՛, ձեղի ալ տամ մէկ քանի հատ՝ պղտիկ ծախսերու համար:
 Ու Մանչօ երբ գրպանէն հանեց քանի մը թղթադրամ ու երկարեց անոնց, երկուքը մէկ բացագանչեցին:
 — Առէ՛ք, շարունակեց Մանչօ, քսան-երեսունական հատ ամէն մէկերնուգ:
 Քահանան ու գիւղապետը յափշտակեցին թղթադրամները: Երկուքն ալ գրին իրենց ակնոցները ու սկսան զանոնք համբել՝ դողդոջուն ձեռքերով:
 — Ի՞նչ կը համբէք, ձանը՛մ, առարկեց Մանչօ, պահեցէք գրպաննիդ... ծախսեցէք դուք ալ սանկ պոլ-պոլ...
 ...

— Իրաւունք ունիս, ըստ գիւղապետը ու
թղթադրամները դրաւ գրպանը՝ քսելով մօրուքին:

Նոյնը ըրաւ քահանան: Յետոյ Մանչօ խոս-
տովանեցաւ թէ ոչ ժառանդ ունէր ոչ ալ այլ եկա-
մուտ և թէ այդ ժառանդի պատմութիւնը շինած
է ինք՝ մարդոց աչքին փոշի փչելու համար:

— Դուն խորամանկ ես, բայց մենք քեզմէ
խորամանկ դուրս եկանք, դիտել տուաւ քահա-
նան, խնդալով:

— Այս', ինչ ընեմ, լաւ բոնեցիք օձիքէս ու
հիմա ձեռքերնիդ եմ... ինչ որ ըսէք՝ ան պիտի ը-
նեմ, այլապէս քանդուած է դորս:

— Մի՛ վախնար, իրար անցաւ գիւղապետը,
մեզմէ խօսք դուրս չ'ելլեր:

— Երբեք չեմ վախնար որ մէկը կը ճանչնայ
կեղծ թղթադրամները, վաղն իսկ դրամատուն պի-
տի տանիմ ու պիտի տեսնէք որ հալած իւղի պէս
պիտի կլլեն:

— Բայց դուն ո՞ւսկից ստացած ես այս կարո-
ղութիւնը, հիացմունքով հարցուց գիւղապետը:

— Աստուծմէ, ամէն կարողութիւն Աստուած
կու տայ մարդուս, բացատրեց քահանան՝ Աստուած
բառը երկիւղածօրէն արտասանելով:

Մանչօ յետոյ յանձնարարեց քահանային թա-
քուն տեղ մը պահել կաղապարը: Քահանան, ապա-
հովցնելու համար զայն, կաղապարը յանձնել ու-
ղեց տղուն, բայց Մանչօ մերժեց և ուղեց որ անոնց
քով մեայ՝ որպէս երաշխիք՝ թէ ինք պիտի կատա-
րէ ինչ որ անոնք փափաքին:

Քահանան հարցուց թէ այդ կեղծ թղթադրամ-
ները իրեն բան մը արժած են:

— Անչուշտ, ըստ Մանչօ, ամէն մէկ կտորը
ինծի կ'արժէ տասը լէվա՝ միայն թուղթը. կը տես-

նէ՞ք, աւելցուց՝ գրպանէն հանելով թղթադրամ մը
այս թուղթը մասնաւորապէս թղթադրամի համար
է, Պուլկարիոյ մէջ չկայ, իսկ ներածելու ալ ար-
գիւղած է, որպէսզի մարդիկ չկեղծեն:

— Ո՞ւրէկէ ձեռք ձգեցիր ուրեմն, հետաքրքըր-
ուեցաւ քահանան:

— Վիեննա գացած եմ՝ գտնելու համար այդ
թուղթէն: Անչուշտ ամէն մարդու չեն ծախեր:
Բայց ես բարեկամ մը ունիմ որ պաշտօնեայ է դոր-
ծարանին մէջ ու ինծի գաղանօրէն կը ծախէ:
Թուղթը շատ սուղ չէ, բայց պաշտօնեային վճարա-
ծըս... սեւ աչքերուս համար չէ որ կ'ընէ անշուշտ...

— Հարկա՛ւ... իրաւունք ունի մարդը... կ'ու-
զէ օգտուիլ ինք ալ վրայ բերաւ գիւղապետը:

— Կը գնեմ նաև քիչ մը պարզ թուղթ, շա-
րունակեց Մանչօ, կը խառնեմ երկուքը իրար ու
մաքսատունէն դէպի տուն...

— Ճիշտ այդ կ'ուզէի հարցնել, վրայ բերաւ
քահանան:

Իսկ Մանչօ աւելի ոգեւորուած շարունակեց:

— Այսպէ՛ս... ու տասը լէվա ծախք մը կ'ըւ-
լայ ամէնը: Թէեւ, կան ուրիշ ծախսեր ալ...

— Ուրեմն, զարմացաւ գիւղապետը, տասը լե-
վի դէմ յիսուն լիվա...

— Տասնի դէմ յիսուն, կրկնեց Մանչօ, հա-
րիւրի դէմ հինգ հարիւր, հազարի դէմ հինգ հա-
զազար:

— Ա՛յ, բացագանչեց գիւղապետը՝ լեզուն
դուրս ձգած ու խելքը թոցնելու պատրաստ, մինչ
Մանչօն կը շարունակէր.

— Տասը հազարի դէմ յիսուն հազար...

— Պրէ՛յ...

— Հարիւր հազարի դէմ կէս միլիոն...

— Վա՛յ, վեր ցատկեց այս անդամ գիւղաւ պետը:

— Իսկ երկու հարիւր հազարի դէմ մէկ միւլոն...

— Օ՛յ, օ՛յ, օ՛յ... կեցէք... ի՞նչ կ'ըսես Մանչօ, հիմա կը խենդենամ...

— Ի՞նչ պիտի խենդենաս, մէջ ինկաւ քահանան, աս առ է, սկսա՞ր՝ ալ գնա ու գնա... բարձրացիր ու բարձրացիր՝ ու ձեռքը վեր բարձրացուց՝ մինչ գիւղապետը բերանաբաց կը նայէր անոր ձեռքին:

Գիւղապետը իրապէս խելքը թոցուցեր էր սակայն: Ոչ կրնար նստիւ ոչ ալ տեղ մը կենալ: Հոս կը դառնար, հոն կը դառնար՝ ու մտքին մէջ կը պարէին միլիոնները գորս պիտի շահէին այնքան դիւրաւ:

— Լա՛ւ, ճանըմ, պոռաց յանկարծ, սկսինք գործի...

Մանչօ, սակայն, ըստւ թէ թուղթ չունի, ոչ ալ դրամ, որովհետեւ ինչ որ ունէր «ցրուեց՝ արւաւ բարեկամներու»: Ըրին չըրին, գիւղապետ ու քահանայ «համոզեցին» Մանչօն որ Վիէննա երթայ ու թուղթ բերէ: Խորամանկ աղան, նախ դժկամոկեցաւ, յետոյ համաձայնեցաւ, ու խոստում առաւ որ իրեն դրամ պիտի հայթայթեն, և որպէսզի բընաւ կասկած չարթնցնէ, յանձնարարեց «առ այժմ քիչ դրամ ճարել»: Թելադրեց նաև հանդիպողին ականջը չձգել գործը, քանի որ մէկը միւսը կրնար մատնել...

Ու, ամէն ինչ ճամբուն նկատելով, երեքը մէկ ելան գուրս՝ մէյ մէկ հատ ճնկելու համար՝ յանուն գործի յաջողութեան...

Գ.

... Մանչօ ուշ արթնցաւ այն առատուն: Գիշերը չէր կրցած քնանալ: Ինք ալ չէր հաւատար եղածին ու ըլլալիքին: Տուն փեսայ պիտի ըլլար հիմա: Եշանուեր էր գիւղապետին գեղանի ու թարյատի աղջկան: Ալ ձեռքի վրայ էր տանը մէջ: Մանչօ հոս, Մանչօ հոն... Զէ՞ որ հարստութեան աղբիւր մըն էր: Գիւղապետը ոչինչ կը խնայէր արիւր մըն էր: Գիւղապետը ոչինչ կը խնայէր, մեղրով ու կարագով կը սնուցանէր զայն:

Նստաւ աթոռի մը վրայ, ոտքը դրաւ միւս ոտքին վրայ: Բասքէթը նստեր էր ծոծրակին ու ձեռքերուն դրած էր ձերմակ ձեռնոց: Բակ եկաւ և աներ հայրը, Ժպտուն: Զեռքէն գար՝ թեւերուն վրայ պիտի կրէր իր անման փեսան... բախաւ մըն էր որ ելեր էր դէմը... Մանչօ կը զգար այդ բուրը, ու կը ջանար միշտ փրկել երեւոյթները:

— Լաւ քնացած, տղաս, հարցուց գիւղապետը:

— Ո՛չ սա գործը, հայրի՛կ...

Ու նստան խօսակցելու: Գիւղապետը, կրկին խօսեցաւ իրենց ծագումէն ու ցեղէն:

— Կարգանովները... հը՛... մեր նախնիքները... այս գիւղը առաջին կարաւանով եկողներն են... ատկէ իրենց յականունն ու գիւղին անունը... Անանկ որ, որդի, դուն հիմա մտնելով մեր ընտանիքն ներս... բայց, մարդուն խօսքը բերանը մնաց: Ու վրայ հասաւ տէրտէրը: Մարդ Աստուծոյ ձգէ չուխտ մը խօսք ընէ: չէ՛, երբ ըսես կը տընդուի: Ու դուրս եկաւ հեւ ի հեւ: Խերով բարով կուի: Ու դուրս եկաւ հեւ ի հեւ: Խերով բարով Մանչոյին սենեակը նստեր էր: Ցցուեցաւ Մանչոյին դէմ, սկիառ մը ուզեց, և՝

— Թամպուրան, ըստւ, պատրաստեց ցանկը,

հիմա պիտի գրէ ստացագրերը: Դուն միայն պիտի
ստորագրես:

Գիւղապետը պէտք չտեսաւ ստացագրի. իր
փեսա՞ն: Պատուաւոր տղայ...: Բայց Մանչօն ան-
հրաժեշտ գտաւ: Ստորագրեր է կամ ոչ, — միշտ
նոյնը պիտի ըլլայ արդիւնքը: Հեղ մը գրպանէր
միայն սա ժողված ու ժողվելիք դրամներնին...
ա՞նկէ յիտոյ Աստուած ողորմած է, կը խորհէր: Հա-
մագործակցական կը կազմէին և դրամ հաւաքելով
պիտի տային Մանչոյին որ Վիենայէն թուղթ բե-
րէ...:

— Մանչօ, խօսք առաւ կրկին գիւղապետը,
երէկ գիշեր քունս փախաւ...
— է՛շ'...

— Ու գաղափար մը ծնաւ մաքիս մէջ:

— Ըսէ տեսնենք:

— Երբ հարստանամ քու չնորհիւ, հոս պիտի
չկենամ, յիսուն վաթսուն հազար լէվա աչք առի,
երեսփոխան պիտի ըլլամ... այն ատեն, Սոֆիա,
քեզի և Պոսիլքային հետ:

— Նրաշալի՛, գոչեց Մանչօն, ատկէ դիւրին
գո՛րծ, ես երեսփոխան և կուսակցական ազգական-
ներ ունիմ բոլոր կուսակցութիւններէն, է՛հ, մենք
ալ պղտիկ գերդաստան չենք...

— Յայտնի է, ճանը՛մ...

— Բառ մը, ու արդէն երեսփոխան ես...

— Պոտլօ՛, Մանչօ, ոգեւորուեցաւ գիւղապե-
տը, կեցցես պէ... տեսա՞ր, տէրտէ՛ր...

— Հապա ե՞ս, վրայ բերաւ քահանան...

— Դուն... քեզ ի՞նչ կրնամ ընել, տէրտէր,
առարկեց Մանչօն, դրամ՝ դրամ... եպիսկոպոս օ-
ժելիք չեմ ա'...

— Է՛, տէրտէր, խելք տուաւ գիւղապետը, ա-

տենին մտածէիր, ձահիլութեանդ՝ կնիկ ունենա-
լու համար տէրտէր ուզեցիր ըլլալ... իեւք ո՛ւր էր
առաջ...

Նոյն պահուն ներս մտան երկու գիւղացիներ՝
Փոստան և Շթէրիուն: Ու մինչ քահանան արագօ-
րէն մեկնեցաւ, գիւղապետը սրտնեղած ձեւով մը
կշտամքեց նորեկները:

— Ո՞ւր էք, ճանըմ, քանի՞ ժամ պիտի սպա-
սենք ձեզի:

Ասոնք ալ անոնցմէ էին, որոնք ոսկիի աղ-
բիւրէն ոգեւորուած ուզած էին իրենց հինգ տասը
փարան բերել ու նորակազմ համագործակցականի
անունով, Մանչոյին տալ որ երթայ Վիեննա ու
թղթադրամի թուղթ գնէ: Անկէ յիտոյ, ալ ով ի-
րենց պէս...

Ու այդ երազանքով մարդիկը աջ ու ձախ ին-
կեր և քանի մը հազար լէվա իրար բերեր էին...

Մանչօն, սակայն, գիտէր զանոնք սիրաշա-
հիւ: Հանեց էքսդրայի տուփը ու քիթերնուն մէյ-
սէկ սիկառ տուաւ:

— Կը տեսնե՞ս, խօսքն ուզեց գիւղապետը
Մանչոյին, ասոնք գիւղապետական անդամներ են:
Անոնք կուսակցական գործերով օրը իրիկուն կ'ը-
նէին. ու ինծի դէմ մինչեւ վերջ... իսկ հիմա, դը-
րամին հոտը առին ու տոլապը դրին կուսակցու-
թիւնն ալ, ընդդիմութիւնն ալ...

— Է՛, շահը կը մօտեցնէ մարդիկը, վճռեց
Մանչօն լրջօրէն:

— Ես այս կարծիքէն եմ, որ մէջ մտաւ Շթէ-
րիուն, այս գործը, իր այդքան մեծ շահերով, մեր
գիւղին մէջ խաղաղութիւն պիտի բերէ:

— Լաւ, գացէք ներս, սենեակը, ըստ գիւղա-
պետը, և արձանագրուեցէք:

Մանչօն առարկեց թէ հարկ չկար այսքան շատ
անդամ գրելու։ Գիւղապետը վստահեցուց զինքը ա-
նոնց բոլորին գաղանապես թիւն մասին։ Ու յե-
տոյ բացարեց Մանչոյին թէ՝ գիւղացիները իրար
են անցած այն օրէն ասդին որ գնչու մը եկած ու
սոկի ակին գուշակութիւնն է ըրած...

— Ի՞նչ գնչու, — զարմանք կեղծեց Մանչօն
բան չգիւնալ ձեւացնելով։

— Սոփիայէն գալէդ առաջ, գնչու մը եկաւ
գիւղ, սկսաւ բացարել գիւղապետը, ու գուշակու-
թիւններ ըրաւ. . . ոսկի, հարսանիք։

— Մի՛ հաւատաք, ճանը՛մ...

— Ի՞նչպէ՛ս չհաւատամ, տղա՛ս, գիտցաւ ամէն
մէկիս անունն անդամ. . .

— Ի՞նչ կ'ըսես. . .

— Այս՛, ձեռքդ կը նայի ու ամէն բան կ'ի-
մանայ. . . տէրտէրն ալ չէր հաւատար, բայց. . .

— Մանչօ, ձայնեց սենեակէն թամպուռան որ
ցանկը կը պատրաստէր, եկուր խօսք հասկցուր որ-
ւոնց. . .

— Ի՞նչ կ'ո՞ւզէն։

— Կ'ուզէն 50 հազարկան գրուիլ. . .

— Ի՞նչ, երկուքը մէկ հարի՛ւր հազար լէվա,
չըլլար. . .

— Ես՞ա է, դժգոհեցաւ Շթէրիօն, հինգական
բաժնեգին։

— Ոչ, չըլլար, առարկեց Մանչօն՝ թէեւ ներք-
նապէս ուրախացաւ։ Խորամանկօրէն կ'ուզէր մեր-
ժել որ աւելի հետաքրքրութիւն սահզէ, թէեւ,
ժաքին մէջ, ցանկին բոլոր հազարները կը պարէ-
ին, հրձուանքով կ'երեւակայէր այն բոպէն, երբ
դրամները գրպանած պիտի հեռանարսա գիւղէն ու,
կնիկէն ալ. . .

— Երկար լեզու էք ամէնքդ ալ դիտել տը-
ւու ցանկը գրողը, մարդ չմնաց որ չիմանայ։
Թէեւ փոյթ չէ, բաւ է որ գիւղէն դուրս ելած չէ
լուրը. . . բայց, ամէն վայրկեան մարդ կու գայ ու
արձանգրութիւն կ'ուզէ, ո՞վ կը փախի ասանկ տուա-
ու ապահով շահէ. . . Առառն հոս ըլլայիք ու տեսնէ-
իք, ամէնքը բակը խոնուեցան, զլուխս ուռիցաւ
խօսք հասկցնելէն։ Կրնա՞ս չգրել, հասկա եթէ կորւ
ծագի ու գաղանիքը մէջտեղ ելլէ. . .

— Ո՞րքան եղաւ գումարը, հարցուց Մանչօ։

— 700,000 լէվա. . .

— Ի՞նչ, գուք խե՞նդ էք, ցատկեց աթոռէն,
ես այդքան դրամով ի՞նչպէս կրնամ մեկնիւ։

— Ուզած չուզած պիտի առնես, գոչեցին գիւ-
ղացիները, շատ գրամ տանք որ շատ ալ շահ առ-
նենք. . .

— Իսկ եթէ կողովտեն. . .

— Մենք հետդ պիտի գանք մինչեւ քողաք. . .

— Իսկ եթէ յանկարծ մեռնիմ. . .

— Հէ՛յ, ատանկ գիւրին գիւրին մարդ չի
մեռնիր. — մեռնիս ալ՝ գրամները անդիի աշխարհ
տանելու չի՞ս ես. . . փառք Աստուծոյ ստորագրու-
թիւն կայ, կառավարութիւն կայ, օրէնք կայ, չը-
սե՛ս, գիւղապետ. . .

— Ինձի նայէ՛, Մանչօ՛, վրայ սերաւ Փրո-
տանը, եթէ երկու երեք տարի առաջ ըլլար, այս
գիւղը հինգ միլիոն ալ կրնար տալ. . . հիմա, եթէ
ուզես, երկու միլիոն կրնանք հաւաքել. . .

— Դրամ կայ, ուրեմն, բայց չէ՞ որ քրիզա-
էր. . . տուրք կ'ուզէն՝ դրամ չունիք, պարտք կ'ու-
զէն՝ դրամ չունիք. . . իսկ շահ եղա՞ւ՝ կոիւ կ'ընէք
որ աւելի գրուիք. . .

— Է՞ն, առուրքը ուրիշ. . .

Վերջապէս, ըրին չըրին Մանչօն «համոզեցին»
որ յիսուն հազարականով ընդունի զիրենք։ Ու
բոլորը մէկ սենեակ մտան՝ ստորագրելու համար։
— Մանչօ, Մանչօ, լսուեցաւ յանկարծ Պոսիլ-
քէին ձայնը։
Մանչօ ետ դարձաւ։ Աղջիկը մօսեցաւ ու ցանկ
մը երկարելով Մանչոյին։
— Ահա գրեցի ինչ որ պիտի բերես Վիեննա-
յէն, նախ քեզի ու ինծի մատանիներ, հինգ զոյդ
մետաքս գուլպայ...
— Է՛ք...
— Երկու մետաքս շրջազդեստ... մէկը կար-
միր... մօտա է...
— Է՛ք...
— Միւսը մանիչակագոյն...
— Է՛ք...
— Մայրիկին համար եազմա մը...
— Է՛ք...
— Երկու տուփ փուտրա...
— Է՛ք...
— Երկու շիշէ եղանգի լաք... և երկու տուփ
կարմիր ներկ՝ շրթունքի համար...
— Լաւ, ըստ Մանչօն, և ցանկը առնելով
համբուրեց։
— Ա՛, թուղթը կը համբուրէ, զարմացաւ Պո-
սիլքէն։
— Սէրէս է, պատասխանեց Մանչօն...
— Բայց ես հոս չե՞մ...
— Եկուր քեզ ալ համբուրեմ...
— Աւելի՛, աւելի՛... ատանկ կարծ չըլլար...
կարծես չես սիրեր զիս...
— Ի՞նչպէս չսիրեմ, աղուորս...
Ու Մանչօ գրկելով աղջիկը տարաւ անկիւնը։

Պարուեց թեւերը և սկսաւ համբոյրներով ողողել
ու սեղմել...
— Կամաց, ձչաց Պոսիլքէն զայն հրելէն ու
երեսները սրբելէն...
— Ինչո՞ւ... չէ՞ որ երկար կ'ուզէիր...
— Այս, բայց պլուզա...
— Պլուզը աւելի թանկ է թէ սէրը...
— Սէր սէր, բայց պլուզը... խելօք՝ տեսնեմ
... հա՛, սա՞նկ (ձեռքերը բռնելով Մանչոյին) տուր
հիմա շրթունքու... սանկ երկար՝ սինեմայի համ-
բոյրի պէս... ոչ թէ չըփը, չըփը, չըփը... սեղմէ
ու սեղմէ... իբրև թէ սոֆիացի ես... ի՞նչ տար-
բերութիւն ունիս զեղի աղոցմէն... անոնք ալ հոս
կը սեղմեն, հոն կը կամթեն... Պիտի երթա՞ս շու-
տով...
— Այս...
— Ես ի՞նչ պիտի ընեմ...
— Երկու շաբաթէն կու գամ... պիտի ամուս-
նանանք, զրամ պիտի շահինք ու երբեք պիտի
չըաժնուինք իրարմէ... Յետոյ երկար ճամբորդու-
թիւններ... նախ վիեննա...
— Նախ վիեննա՛, կրկնեց Պոսիլքէ ու բախա-
ցած։
— Յետոյ Փարիզ...
— Յետոյ Փարիզ... Յետո՞յ
— Յետոյ... Լոնտոն...
Բայց... կէս ճամբան մնացին։ Նախ եկաւ դը-
րացուհի Ցվէթէն։ Յետոյ գիւղին վարժապիտը տըն-
կուեցաւ ու Մանչոյին դրամ տալով ապակի և թուղթ
ապապից։ Ու ահա, տէտօ նօքօն, ծերունի գիւղա-
ցի մը, որ ներս մտաւ ու բարձրածայն։
— Հո՞ս համագործական կը շինեն կոր...
— Ի՞նչ համագործական, հարցուց Քամպուրով՝
սինեակէն դուրս ելելով։

— Կեղծ թղթաղբամի...
 — Քամպուրով նեղուեցաւ; Դուրս եկաւ գիւղապետը եւս: Ու, զայրացիոտ,
 — Խե՞նդ ես, ծերուկ, ըստ, հոս ատանկ գործեր չկան:
 Զուր սակայն: Ծերուկը սպառնաց յայտնել ամէնքին եթէ զինքը եւս չարձանագրեն: Այնպէս որ, զայն եւս անցուցին ցանկին մէջ:
 Ու հազիւ շունչ էին առեր, ահա նոր մը: Ժամերը կը սահէին, սակայն: Ու Մանչօ պիտի մեկնէր: Ամէն ինչ պատրաստ էր:
 — Հիմա, պարսններ, ըստ Մանչօ, երբ Սովիա ժամանեմ, ձեզի պիտի գրեմ, պիտի գրեմ նու վկեննայէն: Ու՝ ամէնառուշը երկու շաբաթէն հոս եմ...
 — Անշուշտ, և այն ատեն հարսնիք մը փառաւոր, վրայ բերաւ գիւղապետը:
 — Հարսնիք մը որ ինը գիւղ արձագանդ գըտնէ, աւելցուց գիւղացի մը...
 — Մնառուկը ձեր աչքին լոյսին պէս պիտի նայիք, յանձնարարեց Մանչօն, դէմքը լրջացնելով և ներսի «կաղապար»ներուն ակնարկելով:
 — Անշուշտ, յայտնեց գիւղապետը:
 — Չեռք դպցնող չըլլայ, գործու տակն ու վրայ կ'ըլլայ...
 — Աս տղան, — գիւղացիներէն մին իր քովին՝ Մանչոյին ակնարկելով, — յիմա՞ր է, ի՞նչ է...
 — Ինչո՞ւ:
 — Բոլոր ստացագիրները կը ստորագրէ՝ առանց կարդալու:
 — Է՞ն, վստահութիւն ունի մեր վրայ...

— Ապէ, վստահութիւն ամմա, ալ այսքան ալ չըլլար, ճանմ... թերեւո կը խարենք կոր զինքը...
 Բակ մտաւ նաեւ պառաւ մը: Եկեր էր «թղթաղը գնելու»: Մանչօն հանեց քանի մը հաս և դըրաւ ափը: Ու ճամբեցին կինը: Հազիւ ելած, երեւցաւ տէրհայրը:
 — Է՛, հարցուց կը մեկնի՞ս, Մանչօ:
 — Այո՛, պատրաստ եմ:
 — Գիւղապետը բերաւ մեծ ծրաբ մը:
 — Արմաղա՞ն, ըստ:
 Պոսիլքան վագեց գուրու ու
 — Այս ալ նուէր է, զոչեց՝ մեծ կողով մը ատլով:
 Կինը հասաւ ետեւնուն ու տոպրակ մը երկարեց: Քանի մը հաւ մորթեր ու խաշեր էր փեսացուն համբեցին՝ համար:
 — Շիշ մըն ալ օդի, ճայնեց գիւղապետը՝ շիշը երկարելով, ու ահա ինքնաշարժի սուլիչը լսուեցաւ: Մանչօ, հրամեշտ առաւ բոլորէն ու ելաւ զուրս, մինչ իր շուրջինները իր բեռները տարին ետեւէն ու փեսացուն ճամբեցին՝ շուտով զայն դիմաւորեւու և հարստանալու յոյսով...
 Դ.
 Մանչոյին երթալէն վերջ, շաբաթներ անցան, բայց ոչ մէկ լսուր ստացուեցաւ: Պոսիլքէ՞ն աւելի անհամբեր զարձեր էր, թէ գիւղապետը, — Աստուծ գիտէ միայն: Որոշ էր որ երկուքն ալ ներքնապէս կը մտահոգուէին: Պոսիլքէն երազներով էր օրօր ուած, նախ: Պիտի վերադառնար Մանչօն, պիտի ամուսնային, ու, թեւ թեւի, Սոֆիա՛: Մայրաքաղաքի թեկնածու է՛ր նաեւ գիւղապետը. ի՞նչը կը պակսէր. մանաւանդ որ իր փեսացուն ոսկիի ակ էր...:

Եւ սակայն, ոչ միայն ոսկիբն, այլեւ Մանչօյին ձայնը չէր լսուեր դեռ։ Ու կասկածը ինկեր էր գիւղը։ Ականջէ ականջ կը փսփսային թէ ա'լ գալիք չէր Մանչօն։ Մանաւանդ կիներն ու աղջիկները։ Նոյնիսկ դրացուհի Մարինան ու իր բարեկամուհի Ցվէթան։ Առաջինը, ճիշտ է, շատ նախանձու էր. բայց Ցվէթանքան անկեղծ ցաւով յայտներ էր իր կասկածը։

Կը կասկածէր և մայրը։

— Սա աղուն գալուն շատ խելքս չի պառկիր, ըստ օր մը՝ բակը՝ Պոսիլքէին քով գալով։ Նամակին մէկը կորսուեցաւ, երկուքը կորսուեցաւ, աշղէ'կ, հատ մըն ալ գոնէ պէտք էր որ ձեռքերնիս հասնէր, աղջի'կու։

— Թերեւս շատ գործ ունի, մայրիկ։

— Է՛ն, գործ. մէկ երկու տող գրելու ժամանակ չի գտներ մարդ, եթէ ուզէ։

— Ուրեմն։

— Ի՞նչ գիտնամ։

— Հսկ կուղես թէ փորձանքի մը եկած է, իրար անցաւ Պոսիլքէն, այսօ, մհուած...։

— Ո՛չ։

— Հապա՞։

— Թերեւս փախած է...։

— Փախած... եւ Պոսիլքէ մէկէն սկսաւ լալ։ Մայրը իրար անցաւ, ուզեց հանդարտեցնել աղջիկը, ու ճիշտ այդ պահուն, հօրը ձայնը լսուեցաւ։ Սուրձ կ'ուզէր։

— Հը՛, կ'այրի... Տակառը գլուխդ անցուր ու յետոյ եկուր սուրձ խմէ՛... եթէ ճիւանդ ես բարիոն խմէ...։

— Քանթարիոնը թող բժիշկները իմեն, կը նիկ... իսկ դուն, Պոսիլքէ, դարձաւ աղջկանը, նո-

րէ՞ն լացեր ես։ Զի՞ս մաիկ ըրէ, պիտի գայ Մանչօն... մօրդ արտոնոցին ականջ մի՛ կախներ...։ Ու մինչ Պոսիլքէն մաս ներս սուրձ եփելու,

— Վա՛յ գլխուրդ, ձայնը բարձրացուց կինը, Մանչօն քեզի պէս յիմա՞ր գիտացար որ ելլէ՛ գայ... լեցուցիք ծոցը դրամով, փառօք ճամբու դրիք ու հիմա կը սպասէք որ գայ... ես քու խելքիդ մեռնիմ։

— Զայնդ կտրէ...։

— Ինչո՞ւ, այդ աւազակին ինչի՞ն վստահեցաք։ Աչքդ բաց, հէ՛... իմ հաւու խելքս բանի չի հասնիր եղեր, գնչուն ճիշտ ըսած է եղեր... տեսա՞ր հիմա... ա՛խ, ինչո՞ւ այն ատեն ստքերս գետին չզարկի ու չպնդեցի ըսածիս վրայ...։

— Կարճ կապէ ըսի քեզի... հեռացիր սա տեղէն, մա՛րե... ա՛մ հիմա գլխուրդ կ'իջեցնեմ աթոռը հա՛...։

Ու մինչ ստքի էր ելեր, ներս մաս քահանան։

— Եկա՛ւ, ձայնեց կինը, եկաւ քեզի խելք տուողը... աէրտէր, քու գլխէդ կը քաշենք կոր սաբուրը...։

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահեր, զարմացաւ, աէր հայրը։

— Զգէ Աստուածդ սիրես, կնկայ արտոնոց, վըրայ բերաւ գիւղապետը։

— Պէ մարդ, ըստ քահանան, ինչո՞ւ կնիկ մարդու կը պատմես տանկ գործերը, նայէ որքուն հանդիսաւ եմ ես։ Ամէն բան չեն ըսեր կնիկներուն։ Երեցկինիս բա՛ն մը չեմ ըսած և ըսելիք ալ չունիմ։

— Ճիշտ է, տէրտէր, իրաւունք առւաւ զիւղապետը։

— Իսկ սա դրացուհիս, ձայնը իջեցուց քահանան, գիտե՞ս ինչ փորձանք եղած է գլխուրա. տառը

հազար լէվան առի՛ իմիններուս բարդեցի ու առւի Մանչոյին, մեր երեսէն ան ալ խնդայ, ըսի... Շաբաթ մըն է, հանգիստ ձգած չունի՛ եկուր խօսք հասկցուր. հանդիպած տեղը դրամը կ'ուզէ... զոնէ նամակ մը դար սա տղէն ալ ու խաղաղէինք մենք ալ...

— Այս, զոնէ նամակ մը...

— Ի՞նչ, այսօ՞ր ալ չկայ...

— Զեմ գիտեր, թամապուռան պիտի բերէ, եթէ այսօրուան սուրհանդակէն ելլէ... իսկ եթէ այսօր ալ չգայ, պիտի դայ վաղը, միւս օր, երեք օրէն չորս օրէն, հինգ օրէն, տասը օրէն...

— Քսա՞ն օրէն, զայրացաւ գիւղապետը, երեսուն օրէն, քառասուն օրէն... տէրտէ՛ր, ես քեզի բան մը ըսե՞մ, իմ սիրաս ալ կըոք կ'ընէ կոր...

— Ի՞նչ կ'ըսես, Տա՞նքօ:

— Հապա ի՞նչ. ոչ կու գայ, ոչ կը գրէ, եղբայր...

Տղայ մի ըլլար. եթէ սպաննուած ըլլար, ոստիկանութիւնը կ'իմանար... Վիէննայէն մինչեւ հոս գիտե՞ս ի՞նչ երկար ճամբայ է... ո՛րքան շատ նամակ կը կորսուի...

— Ճանմ, Ամերիկայէն մինչեւ հոս չի կորսուիր, Վիեննայէ՞ն հոս պիտի կորսուի...

— Ինծի նայէ, Տա՞նքօ, կատարեալ փոստ չկայ այս աշխարհի մէջ. ամէնքն ալ իրար կ'արժեն:

— Ասկէ զատ, աւելցուց գիւղապետը, սա տըղուն երթալէն ի վեր երազիս մէջ բնաւ ոջիլ տեսած չեմ:

— Ոջիլ...

— Այս՛... հեղ մը՝ գնչուին գալէն վերջ տեսյ... ամբողջ մարմնով ոջլուեր էի... ոջիլը դըրամ է կ'ըսեն...

— Դուն «կուտ»ին նայէ՛, Տա՞նքօ, ոջիլէն խեր չկայ...

Քիչ յետոյ եկաւ թամպուրան: Նամակ նորէն չկար: Քահանան յանձնարարեց համբերել, բայց, թամպուրան յայտնեց թէ Մանչօն փախած ըլլաւ լու է:

— Պարա՛պ խօսք, առարկեց քահանան, ի՞նչ էր առածը որ... ինը հարիւր հազար... ինչո՞ւ փախի, հոյ կու գայ, և մեր օգնութեամբը և այս կաղապարներով միլիոններ կը շինէ հանգիստ հանգիստ...

— Ճիշտ է, համոզուեցան գիւղապետն ու թամպուրան, մենք այդ կետը չմտածեցինք...

— Զատածեցինք եա՛... մարդ գործի մը մասին մտածած ատեն՝ հանգաւանօրէն քննելու է զայն:

— Աղէկ, բայց, պէտք է խօսք հասկցնել դըրամ տուողներուն:

— Ատոր ալ դիւրութիւնը կայ, կը գրէնք նամակ մը. աե՛ս, թամպուրա քու գիրդ աղուոր է, Մանչոյին բերնով և իբրեւ թէ Վիեննայէն զրկուած նաշմակ մը պատրաստէ... վրան գրէ, սիրելի բարեկամներ կամ սիրելի հայրիկ... իբրեւ թէ գիւղապետին գրած ըլլայ... Գրէ որ շուտով թուղթը պիտի բերեմ, ու բարեւ գրէ հօթնէն հօթանասուն տարեկանին... թաղ հանգստանան բոլորը...

— Աղէկ, բայց, ե՞ս ինչով հանգստանամ, տէր հայր, առարկեց թամպուրան:

— Ինչո՞ւ անհանգիստ ես որ...

— Որովհեան իմ դրամներէս զատ յիսուն հազար ալ ուրիշ դրամ դրի պայուսակին մէջ, առանց Մանչոյին ըսելու:

— Որո՞ւ դրամն էր ատիկա:

— Պետութեան դրամը, նոր ժողվրած տուր-

Քեր էին... ու հիմա լսեցի որ նովօ Սէլօ քննիչ մը
եկեր է քանի մը օր առաջ... վաղը միւս օր հոս ալ
կը տնկուի:

— Հոգ չէ հանգստացուց տէր հայրը, ձեւով մը
կը ճամբես...

— Աս քննիչները լոլօ չեն կլլեր...

— Քննիչ կու գայ, լոլօ չեն կլլեր, բայց հա-
զարնոց կը կլլեն, ապուշ... կը դնես ձեռքը երկու
հատ՝ եղաւ գնաց:

— Անկարելի է, Տէր Հայր, դուն չես ճանչնար
զանոնք... ձեռքերնին ինկար, չես կրնար ազա-
տիլ...

— Ամմա կ'ընես, հա՛, զարմացաւ գիւղապետը:

— Իրեւ թէ խելացի ես, Թամպուրա, դիտել
տուաւ քահանան:

— Խելք մնա՞ց գլուխս, Տէր Հայր, շաբաթ
մըն է քուն քնացած չունիս... ուրկէ տեղը պիտի
դնեմ այդ դրամը:

— Աղէկ, նանմ, առարկեց գիւղապետը ա-
տիկա քու գործո է, մեզմէ զաղտնի ըրեր ես, ու
հիմա եկեր մեզմէ խելք կ'ուզես...

— Այս, բայց, եթէ գուք չըլլայիք, ես այդ
մեզքը չէի գործեր... դուք պիտի վճարէք յիսուն
հազարը...:

— Խենթեցա՞ր, Թամպուրա, տեղէն ցատկեց
գիւղապետը:

— Խենթ մենթ չեմ գիտեր, պնդեց Թամպու-
րան, ահա հատ մըն ալ ու ցոյց տուաւ աէտօ նո-
քօն, որ ներս կու գար — ան ալ իր դրամը կ'ու-
զէ:

— Այս', այս', կմկմաց ծերուկը, եկայ որ իմա-
նամ թէ մինչեւ ե՞րբ պիտի սպասենք Մանչոյին
վերագարձին: Որոշեցի...

— Ի՞նչ որոշեցիր, իրար անցաւ գիւղապետը:
— ...Որ ստորագրես դուն՝ որպէս երաշխա-
ւոր... որպէս զի, եթէ փեսացուդ չգայ, դուն վը-
ճարես դրամս...

— Ի՞նչո՞ւ:

— Էսին թէ դուն պատասխանատու ես եղեր...

— Ես ըսողին խերն եմ անիծեր...

Եւ սակայն, ծերուկը սկսաւ պնդել: Գիւղապետն
ու քահանան ջանացին զայն համոզել: Նոյնիսկ
Թամպուրան ձայնակցեցաւ անոնց: Բայց, ծերունին
միշտ յամառեցաւ՝ կեցաւ: Յետոյ, ճարանատ,
սատացագիրը դրաւ ծոցը ու մեկնեցաւ: Անոր մեկ-
նելչն վերջ, քահանան ապահովցուց Թամպուրան
թէ՝ «Եթէ քննիչը գայ, ձար մը պիտի գանեն»: Իսկ
Թամպուրան խոստացաւ կեղծ նամակը պատրաստել:
Եւ սակայն, քանի մը վայրկեան վերջ ներս մատ-
Շթէրիուն, գրեթէ չնչասպառ:

— Տէտօ Նօքօն մեղ մատնե՛ց, պոռաց... հի-
մա գինետուն եկաւ ու սոտիկանական տասնապե-
տին պատմեց ամէն բան...

— Ի՞նչ ըստ, հարցուց քահանան չվ թած:

— Էսաւ թէ կեղծ թղթադրամներու համագոր-
ծակցական մը կ'ազմած ենք... բոլորը իրար անցան
ու դէպի հոս ուղղուեցան: Ուր է՝ ուր չէ կու գան...:

— Կու գա՞ն, շփոթեցաւ Թամպուրան:

— Այս, իրենցմէ առաջ եկայ որ լուր տամ ձե-
զի և միջոցներ ձեռք առնէք:

— Ի՞նչ միջոց, եղբայր, կմկմաց գիւղապետը
տէրաբէ՛ր, ըսէ, ի՞նչ միջոց ձեք առնենք... տեսա՛ր
հիմա փորձանքը:

— Ոչինչ, ոչինչ, փորձեց հանգստացնել քա-
հանան՝ ինքն ալ դող ելած, քաջութիւն, Տա՛նքօ...

— Ի՞նչ քաջութիւն, տէրաբէր, ըսէ՛, ի՞նչ ը-
րնենք.

— Թղթակրամներէն բան չեն հասկնար, հոգ մի ըներ, պիտի մտածենք ձար մը... շուտ պահեցէք կաղապարները... սնառուկը մտուանը, մտուանը տարէք... ու ծածկեցէք վրան:

Բոլորը վազեցին դէպի Մանչոյին սենեակը: Գիւղապեաը մտաւ տուն՝ բանալին առնելու համար: Իսկ քահանան դեփ դեղին կտրած,

— Քաջութիւն... հանդարաեցէք... մի վախնաք, կը կրկնէր անընդհատ, ամէնքէն աւելի ինք վախնալով, սակայն: Ամէնքդ պիտի ըսէք թէլուսանկարչյին համագործակցական կազմած ենք... հասկցա՞ք...

— Այո՛, այո՛, ձայնեցին բոլորը:

— Բակ ելան Պոսիլքէն ու իր մայրն ալ: Քահանան ձեւով մը անոնց եւս տեղեկացուց խնդիրը:

Ու մինչ սենեակէն դէպի մտուան կը տանէին սնառուկը, գիւղապեաը կեցաւ յանկարծ ու՝

— Աւելի լաւ է զոմ տանինք, ըստւ, կը դընենք յարդին տակ...

— Տարէք, ճանմ, սրտնեղեցաւ Տէր Հայրը, տեղ մը տարէք շուտով՝ ուր կ'ուզէք հոն տարէք...

— Այս, բայց դուն վճռէ, տէր հայր, ըստ թամապուրան, ասանկ վճռական պահու մը՝ մի՛ լքեր մեզ... չէ՞ որ համագործակից ենք... մէկը ամէնքի համար ու ամէնքը մէկի համար:

Եւ սակայն, քահանան ուզեց կծիկը դնել:

— Ես հիմա պիտի դամ, ըստւ... երթամ միւս կաղապարը պահեմ...

— Սատանան առնի այդ կաղապարը, պոռաց գիւղապետը, հոռ կեցիր հիմա, տէրտէր...

— Զըլլա՛ր... պէտք է երթամ... Քաջութիւն քաջութիւն, ըստւ ու արագօրէն մեկնեցաւ:

— Քաջութիւն, բայց, փախաւ նապաստակի

նյան, մրմուաց գիւղապեաը... է՛հ, հարկաւ ձեռքս պիտի անցնիս... Ես քու մօրուքդ պիտի վետտեմ...

Թէ՛ կը մրմուար և թէ՛ միւսներուն նետ կ'աշխատէր սնառուկը վերցնել: Բայց, սնառուկը ծանը էր: Այնպէս որ որոշեցին ետ տանիլ ու դնել ծաղկանոցը:

Նոյն պահուն, սակայն, ներս մտաւ տասնապեաը, ու իր ետեւէն Նոքօն, Քամպուրովը, սոտիկաններ, ու անոնց ետեւէն կիներու և այրերու բազմութիւն մը:

— Կեցէ՞ք, պոռաց ոստիկանը՝ հազիւ ոտքը գըրած բակէն ներս:

Բոլորը մէկ քար կտրեցան:

— Ահա սնառուկը, ահա սնառուկը, գոչեց Տէտօ Նոքօն' առաջ անցնելով:

— Ոչ ոք չչարժի, կրկին հրամայեց տասնապեաը: Եւ ուզեց բանալին:

Ոստիկաններէն մին մօտեցաւ սնառուկին: Բահանին չկար:

— Ո՞ւր է բանալին, հարցուց տասնապեաը:

— Փե... փե... սաս առ...ա՛ւ, կմկմաց գիւղապեաը:

Ատոր վրայ, սոտիկանները կոտրեցին սնառուկը: Տասնապետն ու Քամպուրով մօտեցան, նայեցան սնառուկին մէջ, բայց, փոխան կաղապարի քուրջեր միայն գտան:

— Ի՞նչ են այս քուրջերը, հարցուց տասնապեաը:

Ամէնքը զարմացան: Քամպուրովը յայտնեց թէ Մանչօն ատանկ հագուստ չունէր: Մօտեցան և ուրիշներ: Ու բոլորը մէկ գոչեցին,

— Ա՛հ... գուշակին հագուստաներն են... ահա և ակնոցը...

— Վա՛յ խերդ անիծեմ, պոռաց գիւղապետը զարմացած, ուրեմն Մանչոն է եղեր գնչուի հազուստով գուշակը...

— Եւ դուն թրակիացի գուշակ կը կարծէիր, գիւղապետ, հեգնեց Քամպուրապը:

— Տեսա՞ր հիմա, ուժ առաւ գիւղապետին կի՞նը ամուսնոյն վրայ խոյանալով, յիմա՞ր, քեզի չէի՞ ըսեր... առ քեզի հիմա փեսացու, փեսա՞յ... հարսնիք... ոսկի...

Տասնապետը սնտուկէն հանեց ապակին ու դառնալով ուսուցիչին,

— Տե՛ս, վարժապետ, ըսաւ, ասոնք չըլլան կաղապարները:

— Այո՛, այո՛, իրար անցաւ Տէտօ Նօքօն, ասոնք են կաղապարները:

Բայց, վարժապետը, նայելէ վերջ ապակիին,

— Ասոնք, ըսաւ, սովորական գունաւոր ապակիներ են՝ թղթաղբամի նկարներով... ուրիշ ոչի՞նչ. ասոնցմով ոչ մէկ թղթաղբամ կարելի է պատրաստել:

— Ուրեմն այրեցա՞ն մեր զրամները, գոչեց Շթէրիուն սարսափած:

— Ո՛չ, ձանմ, վրայ բերաւ Տէտօ Նօքօն, լուսանկարիչը անանկ թղթաղբամներ կը շինէր որ բընաւ չէր զանազանուեր:

Տասնապետը, որ առեր էր պառաւէն Մանչոյին նուիրած թղթաղբամները, գրպանէն հանեց զանոնք, բաղդատեց ապակիին հետ ու ծերուկին հարցուց.

— Այս զրամները այս ապակիին շինուած են:

— Ո՞վ խարեց քեզ, ա՛յ մարդ: Ասոնք իրական թղթաղբամներ են:

— Ուրեմն չըսե՞ս որ աւաղակին մեծն է եղեր սա մեր փեսայ ըլլալիքը, զայրացաւ գիւղապետը...

— Ան աւագակ, իսկ դուք՝ ապուշ՝ բոլորդ ալ պատասխանեց ատանապետը, այսքան ալ միամտութիւն չըլլա՞ր... ա՞չք ալ չունէիք տեսնելու համար...

— Գիւղապետը մեզ վստահեցուց, ըսաւ Տէտօ Նօքօն:

— Ես չէի, իրար անցաւ գիւղապետը... աէրտաէրն էր... ան գտաւ կաղապարը...

— Տէրաէրը... ու՞ր է անիկա...

— Հոս էր, փախաւ...

— Շուտով գնա գտիր ու բեր հոս, հրամայեց տասնապետը սստիկաններէն մէկուն: Իսկ դուն, գիւղապետ, քու ամբողջ խելքովդ կարծէր ես որ ասոնք կաղապարներ են, հա՞...

— Զէի գիտեր, տասնապետ, խարուեր եմ...

— Աղէկ, չէի՞ր կրնար մէկուն հարցնել...

— Ամէն օր ինծի հետ ես, մէջ ինկաւ ուսուցիչը, ինչո՞ւ ինծի չըայուեցար: Անոր համար այն օրը այդ սենեակը մտեր՝ կը փափսային քանի մը հոգի...

— Գաղտնի, հէ՛, զայրացաւ սստիկանապետը... համագործական կ'ընէք, դրամ կը հաւաքէք, Մանչոյին կը յանձնէք որ թուղթ բերէ, թղթաղբամ պատրաստէ ու հարսանաք... չխօսի՞ս, ի՞նչ կը լոես...

— Մենք լուսանկարչական համագործական կազմեցինք...

— Եւ ամէն մեղքիս վրայ ալ տղիկդ նշանեցիր այդ աւաղակին...

— Հաէ, պ. տասնապետ, ըու՛, բերանը բացաւ գիւղապետին կինը, ես քանի՛ հեղ ըսի ու մըտիկ չըրաւ: Խօսէ՛, չխօսի՞ս, դարձաւ ամուսնոյն, հիմա խօսէ... մինակ եղած տաենինի՞ն մարդու ձայն

Հանել չես տար... խայտառակ ըրիք մեզ ամէնուն քով...

— Տո՛ւր սա ցանկը, հրամայեց տասնապետը:
Թամպուրան ցանկը տուաւ տասնապետին:
Վերջինը առաւ, կարդաց ու,

— Ոհօ՛, ձայնեց, յիսուն հոգի... եօթը հարիւր յիսուն հազար լեվա... վա՛յ շունչանորդի, քանի մը թղթաղբամ տուեր ու գրպաննիդ ծոցերնիդ պարպեր է...

Ոստիկանը, որ զացեր էր քահանան բերելու,
վերադարձաւ ու ըստաւ,

— Քահանան հիւանդ է, պարոն տասնապետ,
պառկեր է, գլուխը փաթթեր է լաթ մը, ամբողջ մարմնովը կը դողդողայ... երբ ըսի թէ զինքը կը կանչէք, վախէն մարեցաւ...

— Մեռնի ալ՝ պիտի բերես գիւղապետարան,
հրամայեց տասնապետը:

— Պ. տասնապետ, ըստաւ Շթէրիուն, այս գործին յանցաւորները ուր ալ երթան ի վերջոյ օձիքնին ձեռք պիտի տան: Իսկ մենք որ դրամ տուած ենք խարուելով և ստացագիրներ առած՝ ի՞նչ պիտի ընկնք հիմա:

— Բոլորդ ալ ունիք ստացագիր:

— Այո՛, գոչեցին ներկաներէն շատեր:

— Դուք խաբուեր էք ու գուք ալ պիտի քաշէք տոսր հետեւանքը, պատասխանեց տասնապետը:

— Մենք ի՞նչ յանցանք ունինք, մրմուցին բոլորը... ի՞նչ կ'ըլլայ մեր վիճակը, մենք կը թշուառանանք...

— Լո՛ւ, ի՞նչ ընկնք, ուրեմն, ի՞նչ որոշենք...

— Որոշենք, որոշենք, որ, — գոչեց Փրոտունը — գիւղը քաղցած է, երաշտութիւն կայ...

— Այո՛, այո՛, օգնութիւն ուղենք, ձայնեցին դրանը մէջէն:

— Հեղեղ, կայծակ, կարկուտա... թող վարժաւ պետը տեղեկագիր մը գրէ, պոոացին ուրիշներ...

— Մենք կրնանք դիմել նաեւ երեսփոխանական ժողովին, ըստ ուսուցիչը:

— Այդ պարագային, վճռեց տասնապետը, բոլոր անոնք որ ստացագիր ունին թող գիւղապետարան զան: Հոն պիտի քննենք այս խնդիրը:

— Յետոյ գառնալով միւսներուն,

— Վերցուցէք սա սնտուկը հրամայեց:

— Ու մինչ գիւղապետը կը ջանար տնոյց բըռնել տասնապետը, փափաքելով մէյ մէկ սուրձ խըմել, այս վերջինը, սրտնեղած,

— Սուրձը գիւղապետարանը պիտի խմենք, ըստաւ, հայտնէ, արագ... զուք ալ, բոլո՛րդ... ինկէք տոջիս անոնեմ... վերցուցէք սնտուկն ալ...

Եւ հանեց զանոնք դռնէն գուրս, մինչ խըռնուած բազմութիւնը ծաղրական շեշտով մը կը պատրա.

— Կարվանին միլիոնները... հուսուա՛... Կարվանին միլիոնները'...

ՎԵՐՁ

200

Ազգային գրադարան



NL0224675

“ՄԱՍԻՍ, ԳՐԱՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Լեվ
1.—	Ասուր-Նազիր-Աբալ	10
2.—	Մեծապատիւ Մուրացկանները	30
3.—	“Մասիս,” Տարեգիրք Ա. Տարի	100
4.—	Քանկագին Համբոյր (Կտկերգ. 1 արտար)	10
5.—	Գիրուկ Մարդուն Հանոյինները	ՈՒ. ՃՈՆՍՅՈՆ
6.—	Հռոմի Պապին Զաւակները, (Ա. Հատոր) Մ. ԶԵՎԱՔՈ	150
7.—	Գուշակը (Երգիծավեպ)	ՍՊ. ԳՈՍԹՈՎ
		20



ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ է

ՀՌՈՄԻ ՊԱՊԻՆ ԶԱԻԱԿՆԵՐԸ (Բ. ՀԱՏՈՐ)

(Զգայացունց մեծ վեպ)

